

ԳԵՎՈՐԳ ԱՔԳԱՐՅԱՆ

ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՅՈՒ «ԺԱՄԱՆԱԿԱԿԱՆ ԿԱՆՈՆՔ»
ԿԱՄ «ՔՐՈՆԻԿՈՆՔ»

Հայկական հնագույն թղթյա ձեռագիրը, որը 1951-ին բուրեց իր հաղա-
րամյակը և այժմ պահվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանում
(ձ. 2679), նշանավոր է ոչ միայն որպես ամենահին թղթյա մատյաններից մեկն
աշխարհում, այլև որպես գիտական մեծ կարևորություն ունեցող գիրք-գրադա-
րան: Նրանում ընդգրկված են միջնադարյան գիտության զանազան բնագավառ-
ների (պատմություն, փիլիսոփայություն, աստվածաբանություն, մաթեմատի-
կա, տիեզերագիտություն, օդերևութաբանություն, տոմարագիտություն և այլն)
պատկանող երկեր: Համաշխարհային ձեռագրական մշակույթի այս հազվա-
գյուտ հուշարձանում ընդօրինակված նյութերի ուսումնասիրությամբ զբաղվել
են հայ և օտար մի շարք գիտնականներ: Ձեռագրին դիմելու առիթներ ունեցել
ենք նաև մենք¹: Այսօր մեղ հետաքրքրողը ձեռագրում ընդօրինակված ժամա-
նակագրությունն է, որը հրատարակվել է 1904 թ. Վենետիկում² և 1944 թ. Երե-
վանում³:

Հայ և հույն հեղինակավոր մատենագիրների երկերի օգտագործմամբ
կազմված այս ժամանակագրական հուշարձանը վաղուց արդեն գրավել է մաս-
նագետների ուշադրությունը և դուրս է եկել միջազգային ասպարեզ: 1902 թ.
Համբուրգում կայացած արևելագիտական կոնգրեսում նրան նվիրված գերմանե-

1 Թղթյա ձեռագրի և Շիրակացուն վերագրված ժամանակագրության ընդօրինակություն-
ներից մեկը պարունակող № 5228 ձեռագրի համեմատությամբ պարզել ենք, որ ընդօրինակու-
թյունը կատարվել է ոչ թե անմիջապես թղթյա ձեռագրից, ինչպես որ ենթադրվել է, այլ Վե-
նետիկի Մխիթարյան մատենադարանում պահվող № 218 ձեռագրից (տե՛ս մեր «Սերեոսի Պատ-
մությունը և Անանունի առնչվածք», Երևան, 1965, էջ 112—113): Բացի այդ՝ առանձին հոդ-
վածներ ենք նվիրել թղթյա ձեռագրում պահպանված «Յաղագս ամսոց և նշանաց» օդերևութա-
բանական երկին (հոդվածների մատենագիտությունը տե՛ս Հ. Անասյան, Հայկական մատե-
նագիտություն, հ. 2, Երևան, 1976, էջ 727—729), ինչպես նաև Անանիա Շիրակացուն վերագր-
ված ժամանակագրությանը (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 10, 1971, էջ 477, «Լրարեր»
ՀՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների, 1974, № 7, էջ 76 և 1975, № 10, էջ 86):

2 Անանուն ժամանակագրություն. խմբագիր յօրինեալ յ է դարու ի հնագույն ժամանա-
կագրաց է հրատարակեալ ներածութեամբ և բաղդատութեամբ... Վենետիկ, 1904: Հրատա-
րակիչ Բարսեղ Սարգսյանը ժամանակագրությունը համեմատել է լատիներեն հին թարգմա-
նության հետ (հունարեն բնագիրը դեռևս կորած էր համարվում) և նշել լատիներենի կարևոր
ընթերցման տեղերը:

3 Հրատարակել է Աշ. Արբուհամյանը «Պատմութիւն Անանիայի Շիրակայնոյ համարողի»
խորագրով (որը հրատարակչինն է): Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Անանիա Շիրակացու մատենա-
գրությունը, Երևան, 1944, էջ 357—399: Այսուհետև՝ Շիրակացու մատենագրությունը:

րեն գեկուցմամբ հանդես եկավ Գր. Խալաթյանցը⁴, որը բացահայտեց կապը ժամանակագրության և հույն մատենագիր Հիպոդիտոսի (մ. թ. III դար) Քրոնիկոնի լատիներեն թարգմանության (Liber generationis) միջև: Հետագայում հայտնաբերվեց և տպագրվեց Հիպոդիտոսի երկի հունարեն բնագիրը, որի հրատարակիչները անհրաժեշտ գտան հարակից հրատարակել նաև Թղթյա ձեռագրում Հիպոդիտոսի երկին համապատասխանող հատվածի գերմաներեն թարգմանությունը, ընդգրկելով Շիրակացուն վերագրված ժամանակագրության սկզբից մինչև «Թագաւորք Պարսիկք Սասանականք» խորագրի տակ ընդօրինակված ցանկը ներառյալ⁵: Թեև մինչ այդ հայերեն հրատարակության հեղինակ Բարսեղ Սարգիսյանն արդեն մեծ և անգնահատելի աշխատանք էր կատարել ժամանակագրության ուսումնասիրման, լուսարանման և Liber generationis-ի լատիներեն տեքստի հետ համեմատելու ուղղությամբ, այդուհանդերձ հունարեն բնագրի հայտնաբերումը նպաստեց Թղթյա ձեռագրի միջոցով մեկ հասած ժամանակագրական երկը բազմակողմանի և ավելի մանրամասն ուսումնասիրելու գործին:

Այդ շնորհակալ գործը զլուխ բերեցին Ա. Բաուերը և Յ. Մարկվարտը⁶: Համառոտակի թվարկենք նրանց աշխատությանը հայտնի դարձած այն նորությունները, որոնք այսօր հետաքրքրում են մեզ⁷:

Առաջին. Շիրակացուն վերագրված ժամանակագրությունը ոչ թե մեկ հեղինակի ձեռքով հավաքված, խմբագրված և միմյանց հարմարեցված ժամանակագրական աղբյուրների ժողովածու է, ինչպես ենթադրվում էր մինչ այդ, այլ բաղկացած է երեք տարբեր հատվածներից, որոնք անփոփոխ ի մի են բերված ձեռագրի պատվիրատուի և ստացողի նախաձեռնությամբ: Երկրորդ. ժամանակագրության հիպոդիտոսյան հատվածի հայերեն թարգմանությունը կատարվել է ոչ թե անմիջապես III դարում Հիպոդիտոսի գրած երկից, այլ V—VI դարերում վերամշակված ալեքսանդրյան խմբագրությունից⁸: Երրորդ. Անանիա Շիրակացին ծնվել է 620 թ. և վախճանվել է 705 թ.: Նա իր ուսուցիչ Տյուրիկոսի

⁴ Chalantantz Gr., Die armenische Version der Weltchronik des Hippolytus:—Wiener Zeitschr. f. d. Kunde des Morgenlandes. Bd. 17, 1903. էջ 182—186: նաև «Հանդես Ամսօրյա», 1904, էջ 46—48:

⁵ Hippolytus Werke, 4 Bd., Die Chronik; hergestellt von Adolf Bauer... Nebst ein Beitrag von J. Markwart, Leipzig, 1929. Մարկվարտի թարգմանությունը և ուսումնասիրությունը գրավում է այս նշանավոր հրատարակության 393—558 էջերը: Այսուհետև՝ Hippolytus Werke.

⁶ Ա. Բաուերը մեռել էր նախքան հրատարակությունը, իսկ Մարկվարտի կյանքը ողբերգական վախճան ունեցավ հրատարակվելուց երկու-երեք ամիս անց, 1930-ի փետրվարին: Նրանց աշխատության վերահրատարակիչները, խախտելով հեղինակների կամքը, Հիպոդիտոսի հունարեն բնագիրը հետագայում հրատարակեցին առանց հայկական հուշարձանին վերաբերող բաժնի (Hippolytus Werke, 4 Bd., Die Chronik, Berlin, 1955): Ա. Բաուերի և Յ. Մարկվարտի հրատարակությունը լույս էր տեսել շատ սահմանափակ քանակով և հեղինակների բացակայության պայմաններում Գերմանիայի սահմաններից դրե՞քե դուրս չեկավ:

⁷ Մարկվարտի և Բաուերի հայտնած որոշ նորություններ մենք բննել ենք 1969 թ. մայիսի 23-ին, Մաշտոցի անվան Մատենադարանի 11-րդ գիտական նստաշրջանում, «Անանիա Շիրակացուն վերագրված ժամանակագրության հարցի շուրջը» գեկուցման մեջ:

⁸ Նախամեսրոպյան գրականության ուսումնասիրման գործում ալեքսանդրյան խմբագրության նշանակության մասին մենք արդեն խոսել ենք Վիգեն Եկեղյանի «Գիրք գրոցի» (Երևան, 1978) համար մեր գրած առաջարանում (էջ 20—21):

մոտ գնացել է 16 տարեկան հասակում: Տյուրիկոսն իր պատանեկությունն անցկացրել է զորավար Յոհաննես Միստիկոնի պալատում: Այս փաստերը բացահայտվում են հունական համապատասխան աղբյուրների քննությամբ, որը կատարվել է Անանիա Շիրակացու ինքնակենսագրության գերմաներեն թարգմանության և համեմատական ուսումնասիրության հիման վրա: Չորրորդ. Անանիա Շիրակացու «Քրոնիկոնք» եղել է հարուստ բովանդակություն ունեցող մի ժողովածու: Դա ապացուցվում է Գրիգոր Մագիստրոսի՝ Պետրոս Գետապարձին հասցեագրած նամակով, որը Մարկվարտը վերծանել և թարգմանել է գերմաներեն:

Նորություններից առաջինը, ինչպես տեսանք, վերաբերում է Թղթյա ձեռագրում գտնվող ժամանակագրության հեղինակին: Վերջինիս Անանիա Շիրակացու հետ նույնացրել է առաջին անգամ Թղթյա ձեռագիրն ընդօրինակող գրիչը, որը Վենետիկի № 218 և Մաշտոցի անվան Մատենադարանի № 6228 ձեռագրերում (էջ 79 ա) թողել է հետևյալ հիշատակագրությունը. «Առաջիկայ ժամանակագրական ճառագր յօրինեալ զուգագրութեամբ այլևայլ մատենագրաց՝ Մովսիսի Խորենացույ եւ Անդրէասի, Եպիփանու, Եւսերի, Թուի նոյնպէս Շիրակացույն լինել, զի հասանէ ցաւորս իւր ի ՃԼ՛Ի Թուական»⁹: Հետագա գրեթե բոլոր ուսումնասիրողները ժամանակագրության հեղինակ են համարել Շիրակացուն: Մարկվարտը, սակայն, Շիրակացուն վերագրել է ժամանակագրության միայն երկրորդ կեսը՝ «Կայսերաց գիրքը», որը ձեռագրում սկսվում է այսպես, «Կայսերք Հոռովմոց, թէ որչափ ամբ կալան կամ ամիսք եւ զինչ գործ գործեցան»¹⁰: Այս կեսը ձեռագրերում հանդիպում է նաև մյուս կեսից անշատ ընդօրինակված վիճակում¹¹:

Հօգուտ իր տեսակետի Մարկվարտը վկայակոչել է այն փաստը, որ «Կայսերաց գրքի» հեղինակը, ինչպես և Շիրակացին, առանձնահատուկ ուշադրություն են ցուցաբերում տոմարագիտական հաշիվների նկատմամբ: Դա իսկապես այդպես է, սակայն «Կայսերաց գիրքը» օգտագործած պատմիչներից Ուլտանեսը, Հովհաննես Սարկավազը, Վարդան Բաղիշեցին¹² և այլք Շիրակացու անունը չեն տալիս և առհասարակ չեն ճանաչում այդ երկի հեղինակին: Ավելին. Սարկավազը և Բաղիշեցին «Կայսերաց գիրքը» որոշակիորեն տարբերում են Շիրակացու երկերից, թեև՝ ուրիշ հեղինակի չեն ճանաչում¹³: Հիշենք նաև, որ Բաղիշեցին «Կայսերաց գրքից» բացի իր ցուցակում դրանցել է ևս մի պատ-

⁹ Այս տեղեկությանը վերաբերող ծանոթագրությունում (տե՛ս մեր «Անեբոսի Պատմությունը և Անանունի առեղծվածը», էջ 112, ծ. 187, տող 4) Բ. Սարգիսյանի անունը հիշատակված է սխալմամբ:

¹⁰ «Կայսերաց գիրքը» գրավում է Շիրակացու երկերի 1944 թ. հրատարակության 378—399 էջերը:

¹¹ Բ. Սարգիսյանը ժամանակագրության 1904 թ. հրատարակությունում «Կայսերաց գիրքը» դիտում էր որպես անբաժան մաս, սակայն 1924-ին դատվ, որ ձեռագրերում այն ավելացվել է հետագայում: Տե՛ս Յուզակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի վենետիկ: Հորինեց Հ. Բ. Սարգիսյան, հ. 2, Վենետիկ, 1924, էջ 279:

¹² Տե՛ս մեր հոդվածը, «Բանբեր Մատենադարանի», № 10, 1971, էջ 440:

¹³ Տե՛ս Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 224 և Վարդան Բաղիշեցու կազմած Ձեռագրաց ցուցակը («Արարատ», 1903, էջ 184):

մագիրք¹⁴, որը «Կայսերաց գրքի» հետ նույնանալ չի կարող, որովհետև «Կայսերաց գիրքը» ցուցակում գրանցված է առանձին, որպես Շիրակացուն շախտկանող երկ, այնինչ հիշյալ պատմագիրքը գրանցված է հենց Շիրակացու անվամբ:

Տեսնենք՝ ինչ է ասում ինքը Շիրակացին իր գրած ժամանակագրական երկի մասին: «Ի Զատիկն Տեառն» երկում նա գրում է. «Եւ արար Յեսու ի ԻՅ արամսոյն առաջնոյ զատիկ. բայց անուանէ ի շորեքտասան՝ ըստ աւուրցն լուսնի եւ առնէ նորոգումն կարգացն եղծելոց անապատին. եւ առնէ իրրեւ ի նորոյ սկիզբն կարգաց եւ արինաց որպէս եւ Մովսէս յելանելն յԾգիպտոսէ. քանզի եւ զանցանելն զՅորդանան գետով՝ ելս կոչէ յԾգիպտոսէ: Որպէս եւ ի ժամանակալկա/ն կանոնի նախապատում հանդիսին մերոյ ճառեցաք»¹⁵: Ինչպես տեսնում ենք, Շիրակացին հայտնում է, որ իր գրած «Ժամանակական կանոնում» արդեն նախօրոք խոսել է այն մասին, որ Հորդանան գետն անցնելը նույնպես համարվում է ելք Եգիպտոսից. «Եւ զանցանելն զՅորդանան գետով՝ ելս կոչէ յԾգիպտոսէ»: Ուրեմն բավական է, որ «Կայսերաց գրքում» կամ նրա հետ միասին ընդօրինակված ժամանակագրական հատվածներում գտնեինք Շիրակացու հայտնած միտքը, ինքնբնութիւնը կպարզվեր, որ «Ժամանակական կանոնը» դա է: Նման միտք չենք գտնում Շիրակացու մեզ հասած երկերից և ոչ մեկում: Կնշանակի՝ «Ժամանակական կանոնը» մեզ չի հասել:

Այդուհանդերձ բնասիրութեան մեջ հայտնվել է այն համոզմունքը, որ Շիրակացին նկատի է ունեցել «Կայսերաց գիրքը» սլաբոնակող ժամանակագրական ժողովածուն: Հ. Անասյանը գրում է. «Անանիա Շիրակացին իր Զատիկի ճառում գրում է... որ ինքը Հորդանանի անցման մասին արդեն գրել է իր «Ժամանակական կանոնում»: Իսկ ո՞րը նկատի ունի Անանիա Շիրակացին իր աշխատութեան մեջ «Ժամանակական կանոն» անունով. դա հենց այն հայտնի ժամանակագրությունն է, որ առաջին անգամ վենետիկյան Մխիթարյանները հրատարակեցին 1904 թվին... և որ վերջին տարիներս պրոֆ. Ա. Գ. Աբրահամյանը կրկին հրատարակեց Անանիա Շիրակացու երկերի շարքում: Եվ իրոք այս ժամանակագրության մեջ խոսվում է Հորդանանի անցման մասին. «Յեսու որդի նաւայ իրրեւ անց ընդ Յորդանան գետ, եկաց յերկրին Քանանացոց ամսրան և եւթն... և այլն» ... Մեր բերած այս ուղղակի փաստով այլևս անփիճելիորեն հաստատվում է, որ ...Անանուն «Ժամանակագրությունը»... իրոք Անանիա Շիրակացու աշխատութեանն է»¹⁶:

Հ. Բարթիկյանը համեմատել է Հ. Անասյանի Զատիկի ճառից վկայակոչած հատվածը Շիրակացուն վերագրված ժամանակագրության հետ և գրել. «Ինչպես պարզ երևում է այս համեմատութեանից, Անանիա Շիրակացին իր Զատիկի ճառում ամենևին էլ չի ակնարկում «Ժամանակագրության» մեջ հիշատակված

¹⁴ «Գ (=3) պատմագիրք այլ կայ. մինն է Դաթի վարդապետի պատմագիրք և միւսն Անանիայի Շիրակացոյն և միւսն Սոկրատ պատմագիրք» (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 737, էջ 224բ): Ի դեպ՝ այս գրանցումը վկայակոչելիս մենք «Գ պատմագիրք»-ը անուշադրաբար կարգացել ենք «Բ պատմագիրք» և հանգել գրանից բխող եզրակացութեան (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 10, 1971, էջ 451):

¹⁵ Շիրակացու Մատենագրությունը, էջ 294:

¹⁶ Հ. Ա. Անասյան, Բուզանդարանի ուսուրին թարգմանությունը, Երևան, 1954, էջ 8—9:

վերոհիշյալ փաստը»¹⁷: Սույն առարկությունն իրականությունը համապատասխանում է այնքանով, որ համադրված հատվածները տարրեր բովանդակություն ունեն: Բայց ընթերցողն Անասյանին դիմելիս նկատում է, որ նա ուշադրություն է հրավիրել հատկապես մասնակի այն փաստի վրա, որ երկու հատվածներում էլ խոսվում է Հորդանանի՝ անցման մասին: Եվ հատվածներում իրականում էլ դառնում ենք հենց այն, ինչ նշել է Անասյանը: Զատկի ճառում ասված է. «... դանցանելն զՅորդանան գետով...» իսկ ժամանակագրությունում՝ «... իբրև անց ընդ Յորդանան գետ»: Հետևաբար Անասյանին ժխտելու համար հարկավոր է ցույց տալ Զատկի ճառի և Շիրակացուն վերագրվող ժամանակագրության միջև առկա անհամապատասխանությունը ակնհայտ դարձնող ավելի որոշակի փաստ: Իսկ այդ փաստն այն է, որ Զատկի ճառում Շիրակացին ոչ թե խոսում է սուսկ Հորդանանն անցնելու մասին, այլ հայտնում է, որ Հորդանան գետից անցնելը համարվում է ելք Եգիպտոսից: Ահա այս միտքն է, որ չկա Շիրակացուն վերագրվող ժամանակագրությունում, որով և ապացուցվում է այդտեղ և Զատկի ճառում հիշատակվող «ժամանակական կանոնի» տարրերությունը:

Բարեբախտաբար մեզ է հասել նաև մեկ այլ աղբյուր, որով ստուգվում և հաստատվում է Շիրակացու խոսքը «ժամանակական կանոնի» մասին: Այդ աղբյուրը Ասողիկի Տիեզերական պատմությունն է: Այստեղ կարդում ենք. «Իսկ Հրէիցն վարդապետք և Եվսեբի ժամանակագիր ՆՁ ամ ասեն յելիցն յԵգիպտոսէ մինչև ցշինուած տաճարին: Իսկ Որոգինէս և Անանիա ՆՂ ամ ասեն, համարելով և զԺ ամն Եդոնի դատաւորին: Եւ վասն ճառելոյ Գրոց Թագաւորութեանն նեւ ամին՝ այսպէս ասէ, եթէ Յորժամ զՅորդանանաւ անց ժողովուրդն... զայն ելս կոչէ, որպէս և պատգամաւորէին առ միմիանս Թագաւորքն՝ եթէ Ազգ ել յԵգիպտոսէ»¹⁸: Ընդգծված բառերը ցույց են տալիս, որ Ասողիկը կարգացել է Անանիա Շիրակացու «ժամանակական կանոնը» և գրեթե բառացի կրկնել է Զատկի ճառում հայտնվող տեղեկությունը Հորդանանից անցնելու և Եգիպտոսից դուրս գալու մասին:

Որ Ասողիկը Որոգինեսի հետ միասին Անանիայի անունը նշելով հասկացել է ոչ թե մեկ ուրիշ Անանիայի, այլ Անանիա Շիրակացուն, երևում է նաև հետևյալ հատվածից. «Իսկ յելիցն յԵգիպտոսէ մինչև ցշինուած տաճարին ըստ Որոգինեսայ և Անանիայի Շիրակացոյ ժողովին ամբ ՆՂ»¹⁹:

Ասողիկից քաղված հատվածների միջոցով միաժամանակ որոշ պատկերացում ենք կազմում Շիրակացու «ժամանակական կանոնում» եղած նաև այլ տվյալների մասին: Նույն կարգի ժամանակագրական տեղեկություններ են հայտնում նաև Հովհաննես Սարկավազը²⁰, Գրիգոր Տղան²¹, Գրիգոր Տաթևացին²² և ուրիշներ, որոնք տոմարական հաշիվներ կատարելիս Շիրակացու ա-

17 Ըրաչ Բարթիկյան, Անանիա Շիրակացուն վերագրվող «ժամանակագրության» և նրա բանաբաղի հարցի շուրջը, «Բանբեր Մատենադարանի», № 8, 1967, էջ 68:

18 Մանգանոս Տառաեցի Ասողիկ, Պատմութիւն տիեզերական, Ս. Պետերբուրգ, 1835, էջ 11—12: Այսուհետև՝ Ասողիկ:

19 Անդ, էջ 9:

20 Ա. Գ. Աբրահամյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 224: Այսուհետև՝ Հովհաննես Սարկավազ:

21 Մատենադարան, ձեռ. № 3062, էջ 61բ և «Գրիգորի կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ նամականի», Վենետիկ, 1838, էջ 23:

22 Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, Կոստանդնուպոլիս, 1729, էջ 451:

նունը տալով վկայակոչում են նրա՝ մեզ հասած աշխատություններում շհանդիպող հաշվարկումները Արդյոք դրանք նույնպե՞ս գտնվել են «Ժամանակական կանոնում», թե մեզ շհասած մեկ այլ երկում, շենք կարող ասել:

Շիրակացու և Ասողիկի վկայություններից արդեն գիտենք, որ «Ժամանակական կանոն» ընդգրկել է ժամանակագրական՝ տոմարական տեղեկություններ հատկապես զատկի օրը ճշգրտելու վերաբերյալ: Գիտենք նաև, որ «Ժամանակական կանոն» ընդարձակ պատմագիրք չի եղել: Դա երևում է նրանից, որ Ասողիկն իրենից առաջ գրված պատմագրքերը թվարկելիս Շիրակացու անունը չի տալիս²³: Դարձյալ Ասողիկն է, որ գրում է. «Իսկ Անաստաս խորհեալ Հայաստանեայցս կարգել տոմար անշարժ քստ այլոց ազգաց, և հրամայէ Անանիայի Շիրակացույ կարգել զՔննիկոնն հրաշազան, յորում զտոմարս մեր կարգեաց անշարժ: Եւ Անաստասայ խորհեալ ժողովով և եպիսկոպոսօք հաստատել զՔննիկոնն և վախճանի, կացեալ լաթոն ամս Զ»²⁴: Այստեղ երկու անգամ հիշատակված «Քննիկոն» բառն այլ բան չէ, բան «Քրոնիկոն» բառի աղճատումից ծագած նույնիմաստ տարբնթերցվածք, որը նույնանում է «Ժամանակական կանոնի» հետ:

Անաստաս կաթողիկոսի անվան հետ կապվող մի ժամանակագրական երկի մասին վկայում է նաև Մաշտոցի անվան մատենադարանի № 2220, 2271 ձեռագրերում պահված «Պատմագիրք հայոց» կոչվող մատենագիտական ցանկը²⁵, որում կարդում ենք. «Անանիա Շիրակացին. սկիզբն առեալ յԱղամայ համառօտ գաւազանաւ իջանէ մինչև ի ժամանակս Անաստասայ կաթողիկոսին»²⁶: Հնարավոր է, որ այս տեղեկությունը կազմված լինի Ասողիկի վերոհիշյալ հաղորդման հիման վրա, ինչպես որ Կիրակոս Գանձակեցու հետևողությամբ կազմվել է Ղազար Ճահկեցու տեղեկությունը. «Անանիա ի Շիրակ գաւառէն... Զսա կոչեաց առ ինքն տէր Անաստաս կաթողիկոսն, զի արասցէ անշարժ տոմարս Հայոց որպէս այլոց ազգաց, զոր արար մեծաւ ջանի»²⁷:

«Ժամանակական կանոնի» մասին վկայող աղբյուրների շարքը պետք է դասել նաև Վարդան Բաղիշեցու կազմած ձեռագրացուցակը, որից երևում է, որ

²³ Ասողիկ, էջ 6—7: Այստեղ թվարկված հայ պատմիչներն են՝ Ագաթանգեղոս, Մովսէս Խորենացի, Եղիշե, Ղազար Փարպեցի, Փավստոս Բուզանդ, Աերեոս, Ղևոնդ, Շապուհ Բագրատունի, Հովհաննէս Դրասխանակերտցի:

²⁴ Ասողիկ, էջ 99:

Ասողիկի տեղեկությունը հաստատում է նաև Հովհաննէս Դրասխանակերտցին, առանց «Քննիկոն» խորագիրը նշելու: Տե՛ս նրա «Պատմութիւն Հայոց», ԲիՖլիս, 1912, էջ 92:

²⁵ Ցանկին նմիրված մեր ուսումնասիրությունը տե՛ս Գ. Վ. Արզարյան, Բանասիրական հետախուզումներ, «Բանբեր Մատենադարանի», № 4, 1958, էջ 61—68: Հմմտ. Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. Ա. 1959, Առաջաբան, էջ 20—21, 53—55:

²⁶ Հ. Անասյան, նշվ. աշի., էջ 54:

Մաշտոցի անվան մատենադարանի № 5254 ձեռագրում, ինչպես նաև Վենետիկի Մխիթարյան մատենադարանում և այլուր պահվող որոշ ձեռագրերում Անանիա Շիրակացուն վերագրվող ժամանակագրությունն սկսվում է Աղամից և ավարտվում Անաստաս կաթողիկոսի օրոք իշխած բյուզանդական կայսր Կոստանդինի ժամանակով: Այսպիսի մի ձեռագիր տեսնելով, մյուս կողմից էլ տեղյակ լինելով Ասողիկի և այլոց հայտնած տեղեկությունը Անաստաս կաթողիկոսի և Շիրակացու մասին, «Պատմագիրք հայոցի» հեղինակը կարող էր իր տեսած ձեռագրերում գտնված ժամանակագրությունը վերագրել Շիրակացուն, շնայած մեզ հասած ոչ մի ձեռագրում Շիրակացու անունը չկա:

²⁷ Անդ, էջ 45:

Ամբողջու վանքի մատենադարանում 1689—1704 թվականներին²⁸ պահվել է այդ երկի երկու օրինակ, որոնք ցուցակում գրանցված են «Քննիկոն» անվամբ. «Ա՛լ = 1՛ զիրք ոսկով. Բառգիրքն է սուրբ Յով[հաննէ]սին, որ է Անանիա Շիրակացույն, որ է Քննիկոն»²⁹ «Ա. զիրք Անանիայի Քննիկոն»³⁰:

Քեև այս ցուցակում «Ժամանակական կանոնի» կամ «Քրոնիկոնի» փոխարեն գրված է «Քննիկոն» (ինչպես որ Ասողիկի ձեռագրերում), սակայն համապատասխան աղբյուրների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միջնադարյան Հայաստանում «Ժամանակական կանոն», «քրոնիկոն», «քննիկոն», «գաւազան» (կանոն), «տոմար» և նման այլ բառերը միևնույն նշանակությունն են ունեցել: Սույն փաստը վրիպել է Յ. Մարկվարտի ուշադրությունից: Նա 1929 թ. հրատարակված վերոհիշյալ աշխատության մեջ առանձին քննության է ենթարկել «քրոնիկոն» և «քննիկոն» բառերը և եզրակացրել, որ դրանք արտահայտում են տարբեր իմաստներ: Նրա կարծիքով Ստեփանոս Մալխասյանցը ձիշտ չի վարվել, երբ Ասողիկի Պատմության ձեռագրերում գտնվող «Քննիկոնն հրաշազան»-ը սրբագրել է «Քրոնիկոնն հրաշազան» ձևով: Նա գրում է. «Մալխասյանցը Քննիկոնը դարձնում է Քրոնիկոն, բայց Գրիգոր Մագիստրոսը... նույնպես ունի Քննիկոն: Պետրոս կաթողիկոսին ուղղած մի նամակում նա, ըստ նամակի խորագրի, խնդրում է Անանիա Շիրակացու մի գիրքը, որը կոչվում է մեծ Քննիկոն»³¹: Այնուհետև նա վերծանել և գերմաներեն է թարգմանել Շիրակացու ժողովածուի բովանդակությունը ներկայացնող նամակը և ավելացրել. «Սրանից երևում է, որ Անանիայի երկը բոլորովին էլ միայն ժամանակագրությանը չի վերաբերել: Ուստի «Քրոնիկոն» վերնագիրը քիչ կհամապատասխաներ այդ գրքին: Ես կարծում եմ պետք է ընդունել «Քննիկոն» ձեռագրական ընթերցվածքը: Անանիան ստեղծել է մի այլախառն (hybride) բառակազմություն «քննել» բայից և հունական վերջավորությունից: Սպասելի էր կամ՝ քննական կամ հուն. *κριντικον*»³²:

Այս կարծիքի ելակետը, ինչպես տեսնում ենք, այն է, որ Շիրակացու գիրքն ընդգրկել է տարբեր բովանդակություն ունեցող շատ երկեր, որոնք, ըստ Մարկվարտի, չէին կարող կրել միայն ժամանակագրությանը վերաբերող «Քրոնիկոն» խորագիրը: Մեծանուն գիտնականի ուշադրությունից, սակայն, այս անգամ էլ վրիպել է այն փաստը, որ միջնադարում (ինչպես նաև այսօր) սովորություն է եղել ձեռագիր ժողովածուները կոչել նրանցում ընդգրկված երկերից ամենանշանավորի կամ ստաշինի անվամբ: Այսպես օրինակ, հենց Շիրա-

28 Ցուցակը կաղծվել է 1689—1704 թթ. ընթացքում (տե՛ս մեր հոդվածը, «Բանբեր Մատենադարանի», № 19, 1971, էջ 449):

29 Մաշտոցի անվան մատենադարան, ձև. № 373, էջ 227ա:

30 Անդ, էջ 231բ: Ամբողջու վանքի մատենադարանի «Քննիկոնի» երկու օրինակները Ա. Մալխասյանի ենթադրությամբ «հավանաբար Քննիկոնի տարբեր մասեր են, այլապես Վարդան վարդապետը սովորության համաձայն կգրեր «Բ Քննիկոն», ինչպես օրինակ «Բ Միխայիլ պատմագիրք» (ՀՍՍՀ ԳԱ «Լրագրեր», հաս. գիտ., 1974, № 7, էջ 73): Սակայն Վարդանը ձեռագրաց ցուցակում ձեռագրերը խմբավորել է ըստ նրանց մատենագրական տեսակների, այդ իսկ պատճառով երկու Քննիկոնը միասին գրանցել չէր կարող: Քննիկոններից մեկն ընդօրինակված է եղել այլ քննիքի, մյուսն էլ մեկ այլ քննիքի պատկանող ձեռագրերի կազմում:

31 Hippolytus Werke, էջ 428:

32 Անդ, էջ 427—428:

կացու երկր պարունակած մի ձեռագիր Բաղեշի Ամրդուլու վանքի ձեռագրաց ցուցակում գրանցված է ոչ թե «Քննիկոն», այլ «Բառգիրք» խորագրով: Հիշենք մեզ արդեն ծանոթ այդ գրանցումը. «Ա. | = 1 | գիրք սսկով. Բառգիրքն է սուրբ Յովհաննեսի սին, որ է Անանիա Շիրակացուն, որ է Քննիկոն»: Այս «Քննիկոնի» մեկ այլ ընդօրինակություն Ամրդուլու վանքում հանդիսացել է ձեռագրի գլխավոր երկր և ամբողջ ձեռագրին տվել է իր անունը. «Ա գիրք Անանիայի Քննիկոն և բազում ասացուածք վարդապետաց և մեկնութիւնք անծանօթք»³³: Մաշտոցի անվան մատենադարանում պահվող № 2639 ձեռագիր ժողովածուն թեև իր մեջ կրում է յոթ պատմիչների երկեր, սակայն Բաղեշի Ամրդուլու վանքում գտնված ժամանակ կոչվել է միայն Մովսես Խորենացու անվամբ. «Մեկ Մովսէս պատմագիրի, որ կայ ի մէջ է | = 7 | պատմագիրք՝ Ագաթանգեղ, Մովսէս, Եղիշէ, Ներսէսի պատմութիւն, Ղազարու Փարպեցոյ և Խոսրովու»³⁴:

Ոչ միայն տարրեր հեղինակների, այլև միևնույն հեղինակի երկերը պարունակող ժողովածուները նույնպես որոշակի դեպքերում կարող էին կրել այդ հեղինակի երկերից միայն մեկի անունը: Այդպես է կոչվում, օրինակ, Գրիգոր Նազիանզացու «Առ որս» ժողովածուն, որում զետեղված առաջին երկն սկսվում է «Առ որս» բառերով. «Առ որս բանիւ են պաճուճեալ բանքս» («Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հ. Ա, էջ 9):

«Քննիկոն» բառով գրադված բոլոր բառարանագիրներն այդ բառը գրանցել են «քրոնիկոն» նշանակությամբ³⁵: Սա այնքան հանրահայտ փաստ է, որ վկայակոչումների կարիք չունի: Այնպես, որ Մարկվարտը պետք է պարզապես հիշեր ժողովածուները միայն մեկ երկի խորագրով կոչելու սովորությունը և, հետևելով բառարանագիրներին, ընդուներ, որ Մագիստրոսի նամակի վերնագրի մեջ հանդիպող «քննիկոնը» նույն «քրոնիկոնն» է: Շիրակացին ինքը կամ ուրիշները ժողովածուն կոչել են այդ բառով, որի փոխարեն Զատիկի ճառում հանդիպում է հայկական տարրերակր՝ «ժամանակական կանոն»: Եվսերիոս Կեսարացու ժամանակագրությունը նույնպես կոչվել է մերթ «Քրոնիկոն», մերթ՝ «ժամանակական կանոն»: Հայերեն թարգմանությունում Կեսարացին երբեմն էլ «քրոնիկոն» և «ժամանակական կանոն» արտահայտությունները գործածում է միասին. «...ի քրոնիկոն ժամանակական կանոնսն փոխեցայց»³⁶:

Մագիստրոսի հաղորդման համաձայն՝ Շիրակացու երկերի ժողովածուն բաղկացած է եղել ոչ թե բնական, հետազոտական բնույթի գրվածքներից, այլ տարրեր աղբյուրներից բանաբաղված նյութերից: Հետևաբար այն չէր կարող կոչվել «քննիկ» բառից բխող ինչ-որ անվամբ: Իսկ «Քրոնիկոն» անունը շատ

³³ Անդ, էջ 231 բ: «Մեկնութիւնք անծանօթք»-ի մասին տե՛ս մեր հոդվածը («Բանքեր Մատենադարանի», № 10, էջ 451):

³⁴ Այս գրանցման մասին տե՛ս «Բանքեր Մատենադարանի», № 10, էջ 450—455:

³⁵ Մագիստրոսի նամակում «Քննիկոնը» հիշատակված է այնպես, որ կարող է ընկալվել նաև որպես ոչ թե ժողովածուն, այլ Շիրակացուն ներկայացնող բառ. «...Շիրակայնոյն, զոր Մեծ Քննիկոնն անուանեն»: Վ. Լանգլուան, հավանաբար, միաժամանակ ծանոթ լինելով նաև Հովհաննես Սարկավազի, Սամվել Անեցու, Կիրակոս Գանձակեցու և այլոց աշխատություններին, որոնցում Շիրակացին մեծարվում է «Մեծ» տիտղոսով («մեծ վարդապետ»), Մագիստրոսի «մեծ քննիկոնը» հասկացել է «մեծ ժամանակագիր», ընդունելով որպես Շիրակացուն մեծաբող արտահայտություն: Տե՛ս V. Langlois, Mémoire sur la vie et les écrits du prince Grégoire Magistros.— «Journal Asiatique», 1869, janvier, p. 37.

³⁶ Եվսերիոս Կեսարացի, ժամանակականք երկմասնեայ, մասն Ա, վենետիկ, 1818, էջ 9:

րնական պետք է լիներ, որովհետև Շիրակացու տոմարական աշխատությունը հանդիսացել է ժողովածուի գլխավոր երկը:

Մենք քիչ հետո ցույց կտանք, թե գրչական ինչ ճանապարհ է անցել «Քրոնիկոնը», մինչև որ աղճատվելով դարձել է «Քննիկոն», իսկ այժմ հիշենք, որ «Քննիկոնը» աղճատված բառ չի համարում նաև Ա. Մաթևոսյանը: Նա վկայակոչել է Ասողիկի ձեռագրերը, որոնցում ամենուրեք գրված է «Քննիկոն»³⁷: Սակայն հայտնի է, որ ամենահին ձեռագիրը (2865), ընդօրինակված է Ասողիկից երեք դար հետո և գերծ չէ նաև այլ փոփոխություններից:

Մաթևոսյանը միաժամանակ գտնում է, որ հնարավոր չէ «Քրոնիկոնից» ստանալ «Քննիկոն»: Նա գրում է. «Որպեսզի Քրոնիկոնը Քննիկոն դառնա, «քրանիկոն» բառի «րաւ» տառակապակցությունը պետք է «փոխվի» ն-ի, որ հնարավոր չէ»³⁸: Բայց ձեռագրական աշխարհին քաջ ծանոթ իմ գործընկերոջը հայտնի է, որ գրիչները բառերն արտագրում են երբեմն աներևակայելի աղճատումներով, որոնց կողքին «Քրոնիկոն»—«Քննիկոն» անցումը անսպասելի չէ: Բավական է, որ «Քրոնիկոնը»³⁹ գրված լիներ երկու տառի («րո») սղմամբ՝ կատարել «քնիկոն», որն էլ իր հերթին հեշտությամբ կդառնար «Քննիկոն»: Մաթևոսյանն ինքը չի բացատրում տառերի սղմամբ նոր բառեր ստանալու հնարավորությունը: Նա գրում է. «Քննիկոնն առաջացել է Քաննիկոն բառի առաջին երկու ձայնավորների սղմամբ»⁴⁰:

Ինչպես նոր Հայկազյան բառարանում, այնպես էլ Հ. Աճառյանի Արմատական բառարանում և առհասարակ հայերենում «քանոնական», «քանոնիկոն» բառերը նշանակությունն այնպիսին է («ըստ ուղղութեան քանոնի»⁴¹, «քանոնով քաշված ուղիղ»⁴²), որ չի համապատասխանում Գրիգոր Մագիստրոսի նամակում Շիրակացու ժողովածուի մասին հայտնված տեղեկություններին և չի կարող ընդունվել որպես որևէ գրքի խորագիր⁴³ (Շիրակացին հագիվ թև իր գիրքը համեմատեի քանոնով քաշված գծի հետ):

Այժմ տեսնենք, թե ինչպես է «քրոնիկոն» բառը դարձել «քննիկոն»: Նախասենք, որ Հ. Աճառյանը բառի աղճատումը դիտել է որպես նշյունական փոփոխման արդյունք. «Քրոնիկոն... յետին հնչումով՝ Քննիկոն»⁴⁴: Մեր կարծիքով, սակայն, փոփոխությունն ընթացել է գրավոր ճանապարհով: Չեռագիր

37 Ա. Ս. Մաթևոսյան, Անանիա Շիրակացու «Քննիկոնը», ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1974, № 7, էջ 69—70: Հմմտ. նաև՝ Ա. Ս. Մաթևոսյան, նորից Շիրակացու Քննիկոնի մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1981, 2, էջ 224—225:

38 Անդ, էջ 77:

39 Ա. Մաթևոսյանը նշել է «Քրանիկոն» ձևը, սակայն ձեռագրերում ավելի հաճախ հանդիպում է «Քրոնիկոն» (Քրոնիկոն), որն ավելի հեշտությամբ կվերածվեր «Քննիկոնի»:

40 Ա. Մաթևոսյան, նշվ. աշխ., էջ 77:

41 «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի», հ. 2, էջ 980:

42 Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Երևան, 1979, էջ 552:

43 Անանիա Շիրակացու երկերի ժողովածուի («Քրոնիկոնի» կամ «Քննիկոնի») բովանդակության մանրամասնությունների, նրա նպատակի, գործածության, ինչպես նաև Գրիգոր Մագիստրոսի նամակի վերծանության մասին մեր կարծիքը տարրերվում է Յ. Մաթևոսյանի, Ա. Մաթևոսյանի և Գ. Պետրոսյանի կարծիքներից, որոնց մենք չենք անդրադառնում: Այսօրվա մեր նպատակը Շիրակացու գլուխգործոցի խորագիրը և «քննիկոն»—«քրոնիկոն» բառերի հարաբերությունը որոշելն է:

44 Հ. Աճառյան, նշվ. աշխ., հ. 4, էջ 601:

ընդօրինակող գրիչները ճիշտ չեն ընդօրինակել «քրոնիկոն» բառը, որի հետևիվանքով առաջացել է «քննիկոնը»:

Դիմենք բառը պարունակող ամենահին գրավոր հուշարձանին՝ Թղթյա հաղարամյա ձեռագրին: Ճիշտ է, «քրոնիկոն» բառը հայերենում գործածվել է դեռևս V—VI դարերում, նվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնի» հայերեն թարգմանությունում, սակայն մեզ չի հասել նշված դարերից ոչ մի ձեռագիր: Հետևաբար պետք է դիմենք 981 թ. ընդօրինակված Թղթյա ձեռագրին:

Այստեղ «քրոնիկոն» բառը գործածված ենք գտնում Շիրակացուն վերագրված ժամանակագրության «Կայսերաց գրքի» բաժնում. «Ըստ Հրէից՝ մինչև ի ծնունդն՝ ամբ S/ = 4000/, ըստ Շամրտացոց՝ S, ըստ Յունաց Եպիփանու Կիպրացոյ Պատմութեանն PՇ/ = 5500/, ըստ Քրիկոնի (sic!) բազմավելայ⁴⁵ (sic!) պատմութեանն՝ PՃՂԸ/ = 5198/»⁴⁶: Ինչպես տեսնում ենք, «Քրոնիկոն» բառի ամենահին գրանցումը մեզ է հասել երկու տառի սղմամբ, «Քրիկոն» ձևով: Սղված են «ոն» տառերը: Միևնույն սղմանն է ենթարկվել նաև Սամվել Անեցու ժամանակագրության ընդօրինակություններից մեկը, որում կարդում ենք, «Անտի մինչև ի ծնունդն Քրիստոսի և ապա ըստ «քրիկոնին» գաւազանօր պրաւեսցութ... ի ներկայս»⁴⁷: Բավական է, որ «ոն»-ի փոխարեն սղվելին «րո» տառերը, կատացվեր «քնիկոն», իսկ սա, ինչպես ասվեց, հեշտությամբ կը վերածվեր «քննիկոնի»: Որ դա այդպես է եղել, այդ մասին վկայում է Ուխտանեսի «Հայոց պատմության» մեզ հասած միակ ձեռագիրը, որում նույնությամբ կարդում ենք այն, ինչ քիչ առաջ բաղեցինք Թղթյա հնագույն ձեռագրից: Այսպես. «Ըստ Հրէիցն մինչ ի ծնունդն Քրիստոսի՝ շորս հազար ամբ, և ըստ Շամրտացոյն՝ շորս հազար, իսկ ըստ Յունաց Եպիփանու Կիպրացոյ Պատմութեանն հինգ հազար հինգ հարիւր ամ, և ըստ Քննիկոնին բազմավելայ պատմութեան հինգ հազար հարիւր իննսուն և երկու»⁴⁸: Բառացի արտագրված է Թղթյա ձեռագրում գրանցված տեղեկությունը: Միակ տարբերությունն այն է, որ այս անգամ «Քրոնիկոնին» փոխարինում է «Քննիկոնը»: Եթե մտածենք, որ Ուխտանեսի հեղինակային օրինակում նույնպես եղել է «Քննիկոն», պետք է ընդունենք, որ անցումը «քրոնիկոնից» «քննիկոնին» տեղի է ունեցել դեռևս X դարում:

Սույն բառերի փոխարինարար գործածությունը հետագա դարերում դառնում է ավելի հաճախակի: Այդ մասին վկայող օրինակները բերելուց առաջ, քանի դեռ Ուխտանեսից չենք հեռացել, փորձենք գտնել «Քրոնիկոն (կամ «Քննիկոն») բազմավելայ պատմութիւնը», որը վկայակոչված է Թղթյա ձեռագրում և Ուխտանեսի երկում: «Բազմավելայ» բառը հայ մատենագրության մեջ բազմիցս օգտագործված է որևէ երկի բազմակողմանիությունը ցույց տալու համար: Բառն օգտագործել է նաև ինքը՝ Շիրակացին. «... ի բազմավելայ

⁴⁵ «Բազմավելայ»-ի փոխարեն գրված «Բազմավելայ»-ը մատնում է գրչի անուշագրությունը, որի արդյունք է նաև «Քրոնիկոնին» փոխարինող «Քրիկոնը»:

⁴⁶ Մատենագրան, ձև. № 2679, ք. 50ա, տ. 18—19. Հմմտ. Շիրակացու մատենագրությունը, էջ 379:

⁴⁷ Սամուել Անեցի, Հավարձութիւնք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 4:

⁴⁸ Ուխտանես, Պատմութիւն Հայոց, հ. Ա, Վաղարշապատ, 1871, էջ 44: Հմմտ. նաև էջ 33: Հայկական մշտա աղբյուրները (Թղթյա հնագույն ձեռագիր, Հովհաննես Սարկավազ, Սամվել Անեցի և այլք) բոլորը նշում են PՃՂԸ (5198), որից երևում է, որ Ուխտանեսի ձեռագրում «Բ»-ն սխալմամբ կարգացվել է «Ք»:

պատմութենէն Պատգայ Աղեքսանդրացոյ»⁴⁹: Գրիգոր Մաքիստրոսը հայտնում է, որ Շիրակացին «Քննիկոն» ժողովածուում նյութեր էր հավաքել «ի բազմավէպ»⁵⁰ մատենագրից Քաղղեացոց»: Միևնույն Մաքիստրոսը «Քննիկոնը» կոչում է նաև «Մեծ Քննիկոն», որը հիշեցնում է Ասողիկի «Հրաշագան Քննիկոնը»: Տեղեկությունների այս միջավայրում հավանականությունից շատ հետո շէր լինի այն ենթադրությունը, որ Թղթյա ձեռագրում և Ուխտանեսի երկում նշված վերահիշյալ «Քրոնիկոն (Քննիկոն) բազմավէպ պատմութիւն» արտահայտությամբ նկատի է առնված միևնույն «Մեծ Քննիկոնը» կամ «Հրաշագան Քննիկոնը», որում Աղամից մինչև Քրիստոսի ծնունդն ընկած տարիների գումարը նշված է եղել ԲՃՂԸ (5198) տարի:

Մեր ենթադրությունը ավելի հավանական է դարձնում (եթե ոչ՝ հաստատում) Հովհաննես Սարկավազը, որը տարիների նույն գումարը նշում է որոշակիորեն Անանիա Շիրակացու անունը տալով. «ՅԱղամայ մինչև հայ թուականն... ըստ Անանիայ Շիրակունույ՝ ԲՃՂԸ»⁵¹: Ճիշտ է, Սարկավազն այդ գումարը նշում է ոչ թե Աղամից մինչև Քրիստոսը, այլ Աղամից մինչև հայ թվականն ընկած ժամանակաշրջանի համար, բայց, ինչպես ցույց կտանք ստորև, դա պարզապես անուշադրության հետևանք է:

Սարկավազն իր մեկ այլ աշխատությունում միևնույն գումարը նշում է այն իմաստով, ինչ Թղթյա հին ձեռագիրը և Ուխտանեսը: Նկատի ունենք «Պատճեն տումարի» խորագրով հրատարակված աշխատությունը: Հայտնի է, որ Սարկավազի անվամբ հրատարակված որոշ երկեր մեծ մասամբ արտադրված են Շիրակացոց: Այսպես օրինակ, «Պատմութիւն սրբոյ զատկին» խորագրի տակ հրատարակված նյութը գրեթե ամբողջությամբ արտադրված է Շիրակացու «Ի զատկին Տեառն» ճառից⁵²: Մեզ թվում է, Սարկավազի անվամբ տպագրված «Պատճեն տումարում» հայտնվող տեղեկությունները նույնպես Շիրակացունն են. «ՅԱղամայ ի ծնունդն Քրիստոսի ԲՃՂԸ ամ է»⁵³: Նույնն է Սարկավազի նաև մեկ այլ էջում (127). «Աղամայ մինչև ի... ծնունդն Քրիստոսի... միանգամայն ԲՃՂԸ»: Այս գումարը վկայակոչված է նաև Սամվել Անեցու ժամանակագրությունում⁵⁴:

Ինչ վերաբերում է Սարկավազի այն տվյալին, որի համաձայն Շիրակացին ԲՃՂԸ-ն նշել է որպես Աղամից մինչև հայոց թվականն ընկած տարիների

49 Շիրակացու Մատենագրությունը, էջ 356:

50 Մատենագարան, ձեռ. № 3062, էջ 247բ—248ա: Տպագիր հրատարակությունում «բազմավէպ»-ի փոխարեն տպագրված է «բազմավէպ»:

51 Հովհաննես Իմաստասեր, էջ 224:

52 Հմմտ. Հովհաննես Իմաստասեր, էջ 270—275 և Շիրակացու մատենագրությունը, էջ 292—299:

53 Հովհաննես Իմաստասեր, էջ 205:

54 Սամվել Անեցի, էջ 51: Այստեղ կարդում ենք. «Սկսեալ ի նախաստեղծ մարդոյն (Աղամից մինչև Քրիստոս—Գ. Ա.) յորս ժողովին ամբ ԲՃՂԸ. ըստ Եօբանաւնիցն բարգմանութեան...»: Ընդգծվածից երևում է, որ Սամվել Անեցու ազդրուրում «ԲՃՂԸ»-ն ներկայացված է եղել որպես Աստվածաշնչի վրա հիմնված ստույգ հաշվարկում: Նույնն է նաև Գրիգոր Տաթևացու Հարցմանց գրքում. «Ըստ Եօբանաւնիցն՝ ԲՃՂԸ ամ» (Գիրք Հարցմանց, էջ 451): Սամվել Անեցին մեկ այլ էջում (14—15) գրում է. «Դարձեալ ի նոյն գրոց՝ յԱրարածոց», նկատի ունենալով Աստվածաշունչը, սակայն, իրականում նա օգտվում է Անանիա Շիրակացուն վերագրված ժամանակագրությունից (տե՛ս Շիրակացու Մատենագրությունը, էջ 360):

գումար, ապա այդ սխալը բացահայտվում է Գրիգոր Տաթևացու հետևյալ վերլուծությամբ. «Ի վեղամայ մինչ ի ծնունդն Քրիստոսի է ըստ... Եօթանասնից ՐՃՂԸ ամ: Եւ ըստ Անանիա Շիրակացոյ՝ վեղամայ ի թուականն Հայոց են ամք ՐՔՃՀԶ (5976)»⁵⁵: Ինչպես տեսնում ենք, Տաթևացին ՐՃՂԸ գումարը որոշակիորեն զանազանում է Շիրակացու նշած՝ Աղամից մինչև Հայոց թվականն ընկած տարիների գումարից: Տաթևացու նշած թվերը գծրախտարար աղճատված են, սակայն ներկա դեպքում կարևորն այն է, որ Տաթևացին Շիրակացու նշած Աղամից մինչև Հայոց թվականը տարբերում է Աղամից մինչև Քրիստոսը թվականից:

Թղթյա ձեռագրում և Ուխտանեսի գրքում հիշատակվող «բաղմավէպ պատմությունը» Ասողիկի և Մագիստրոսի հիշատակած «հրաշաղան Քրոնիկոնի» և «Մեծ Քննիկոնի» հետ նույնացնելուն նպաստում է նաև Գրիգոր Տղան: Նա Գրիգոր Տուտեորդուն ուղղած նամակում Անանիա Շիրակացու գիրքը նշում է «բաղմավէպ» բառով. «Իսկ առ այս (տոմարի և ժամանակագրության մասին - Գ. Ա.) Անանիա և Անդրևաս բաղմավէպ գրութեամբ ճառեցին»⁵⁶: Ինչպես երևում է, Գրիգոր Տղայի օգտագործած ձեռագրում առկա է եղել նաև Անանիա Շիրակացու ինքնակենսագրությունը, որի մասին է վկայում Գրիգորի խոսքի շարունակությունը. «Որպէս և պատմէ նոյն ինքն Անանիա յաղագս անբարեսէր ազգիս արանջմամբ, առ որս ոչ պատուի գիտութիւն»⁵⁷: Այս խոսքն արձագանքն է Շիրակացու ինքնակենսագրության «ոչ սիրաւոյ իսկ է սզգ մեր իմաստից և գիտութեանց» մտքի⁵⁸:

Վերադառնանք «քրոնիկոն» և «քննիկոն» բառերի նույնությունը հաստատող սկզբնաղբյուրներին: XII դարում ապրած Սամվել Անեցին գրում է. «Ըստ քրոնիկոնին գաւազանաւք զբաւեսցուք»⁵⁹, իսկ XVIII դարում կազմված «Պատմագիրք Հայոց» կոչվող ցանկի հեղինակը Սամվելի խոսքը փոխում է և «քրոնիկոնի» փոխարեն գրում է «քննիկոն». «Սամուէլ երեց, որ արար զՖենիկոնն գաւազանազիրքն»⁶⁰: Նույն Անեցին Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնը» կոչում է, բնականաբար, «Քրոնիկոն» և, հասկանալի է, որ այդպես պետք է կոչել նաև XIII դարի մեծ գիտնական Վանական վարդապետը, սակայն Վանականի «Հարցմունք և պատասխանիք» գիրքն ընդօրինակող գրիչները գրում են. «Չնկեղեցական պատմութիւնն և զՔննիկոնն նա (Եվսեբիոս Կեսարացին— Գ. Ա.) արար»⁶¹: XIII դարի մատենագիր վարդան Արևելցին Սամվել Անեցու «Քրոնիկոնը» կոչում է այնպես, ինչպես կոչել է հեղինակը, բայց Վարդանի «Տիեզերական պատմության» գրիչներից մեկը նրա նշած «Քրոնիկոնը» դարձյալ փոխում է «Քննիկոնի». «զգաւազանսն յօրինեաց Քննիկոնին Անեցին»⁶²: Նույն դարում Գլաձորի համալսարանի տնօրեն Եսայի Նչեցին Կյուրեղ Աղեք-

55 Գրիգոր Տաթևացի, Գիրք հարցմանց, էջ 451:

56 «Գրիգոր կաթողիկոսի Տղայ կոչեցելոյ նամականի», Վենետիկ, 1838, էջ 23: Հմմտ. Մատենադարան, ձեռ. № 3062, էջ 61ր:

57 Անգ:

58 Շիրակացու մատենագրությունը, էջ 208—209:

59 Սամվել Անեցի, էջ 4:

60 Մատենադարան, ձեռ. № 2220, էջ 292, № 2271, էջ 214: Հմմտ. Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հ. 1, էջ 55 (առաջարան):

61 Մատենադարան, ձեռ. № 3074, էջ 98ա, ձ. № 1254, էջ 40ր և այլ ձեռագրեր:

62 Վարդան Արևելցի, Պատմութիւն տիեզերական, Մոսկվա, 1861, էջ 159:

սանդրացուն վկայակոչելիս գրում է «Քրոնիկոն», նկատի ունենալով Կյուրեղի վկայակոչած Եվսեբիոս Կեսարացու Քրոնիկոնի առաջին գիրքը («Կորովամիտն Կիւրեղ Աղեքսանդրացի գրէ այսպէս. եթէ՛ Բաղում անգամ յուզեցի ի Քրոնիկոնն»)՝⁶³, իսկ Մաշտոցի անվան Մատենադարանի № 5254 ձեռագրի գրիչը Կյուրեղ Աղեքսանդրացու վկայակոչած Եվսեբիոսի «Քրոնիկոնը» դարձնում է «Քննիկոն»։ «Իսկ ես յառաջին Քննիկոնէն խնդրել գտի ոչ 1/30/ամ յորելենին, այլ 6/5/ ամ գերութեանն Յովակիմայ»⁶⁴։ Բազմից սուրբ Հովհաննէս վանքում ընդօրինակված Շիրակացու երկը կոչվել է «Քրոնիկոն» («Արգ գրեցաւ Քրոնիկոնս»⁶⁵), իսկ նույն վանքի անունը կրող մեկ այլ ձեռագիր (կամ միևնույն ձեռագիրը) Վարդան Բաղիշեցու ցուցակում գրանցված է «Քննիկոն» անվամբ։ «Ոսկով բառգիրքն է սուրբ Հովհաննէսին, որ է Անանիա Շիրակացույն, որ է Քննիկոն»⁶⁶։

Այսպես կարելի է անընդհատ շարունակել թվարկումը «քրոնիկոն» և «քննիկոն» բառերի նույնությունը ցույց տվող հուշարձանների, որոնք մի ավելորդ անգամ գալիս են ապացուցելու, որ հայերենում «քննիկոն» բառը չունի ոչ մի այլ նշանակություն, բան այն, ինչ գրանցել են Մխիթարյան բաղամահմուտ գիտնականները նոր Հայկազյան բառարանում⁶⁷։ Այնպես որ պետք է առանց վարանելու ընդունել, որ «քննիկոնը» նույն «քրոնիկոնն» է և շարմանալ, որ այդպես են ընդունել ոչ միայն բառարանագիրները, այլև բոլոր այն գիտնականները, ովքեր երբևէ առիթ են ունեցել զբաղվելու այդ բառով և քաջ ծանոթ են եղել բառի ամենաբազմազան իմաստներին։

Վ. Լանգլուայի օգտագործած ձեռագրում Մազիստրոսի նամակի «Քննիկոնի» փոխարեն գրված է «Քննոկոն»⁶⁸, որից երևում է, որ գրիչը մտովի հիշել է «Քրոնիկոն» բառը, կրկնելով նրա «ո» տառը։ Հակառակ մտածողությամբ է առաջնորդվել մեր Մատենադարանի № 5566 ձեռագրի գրիչը, որը գրել է «Քրի-նիկոն» (էջ 66բ), որում կրկնված է «Քննիկոնի» «ի»-ն։ Ձեռագրական աշխարհում այսպես աննկատ ձուլվել և միահյուսվել են «քրոնիկոնն» ու «քննիկոնը»։

Մեր հիշատակած մատենագիրների հաղորդած տեղեկություններից երեկում է, որ «քրոնիկոն» կամ «քննիկոն» ասելով նրանք հասկացել են մերթ

63 Մատենադարան, ձեռ. № 5566, էջ 8ա։ Հմմտ. ձ. № 1241, էջ 7բ։

64 Մատենադարան, ձեռ. № 5254, էջ 59ա։ Հմմտ. Եվսեբիոս Կեսարացի, Փամանակականը երկմասնեայ, մասն Ա, Վենետիկ, 1318, էջ 187. «Ոչ յաւերածոյ տաճարին համարեալ զգերութեանն ժամանակս (այսինքն՝ «ոչ 1=30 ամ յորելենին»—Գ. Ա), այլ ևս՝ ի վերուստ, յերկրորդ (Կյուրեղ Աղեքսանդրացու օգտագործած Քրոնիկոնի ձեռագրում եղել է «ի հինգերորդ»—Գ. Ա.) ամէն Յովակիմայ»։

65 Տե՛ս Ա. Մարտոսյան, Անանիա Շիրակացու «Քննիկոնը» (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1974, № 7, էջ 74)։

66 Տե՛ս վերը։

67 Հայկազյան բառարանի գիտնական հեղինակները, հենվելով հայ դարավոր մատենագրության փորձի վրա, «քննիկոն» բառը նույնացրել են «քրոնիկոնի» հետ և բառարանում գրանցել են այդ իմաստով. «Քննիկոն. փոխանակ գրելոյ «Քրոնիկոն» (էջ 1009)։

68 Langlois V., նշվ. աշխ., էջ 37։ Վիեննայի Մխիթարյան մատենադարանում պահվող ձեռագրում՝ «Քննիկոն» (տե՛ս Տաշյան Հ., Ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 153)։ Անտոնյան մատենադարանի ձեռագրում՝ «Քննոկոն» («Հանգիս ամսօրյա», 1909, էջ 110)։ Հայտնի են նույն ընթերցվածքն ունեցող նաև այլ ձեռագրեր։

Շիրակացու երկերի ժողովածուն, մերթ ժողովածուի զլիսավոր երկը, մերթ՝ առհասարակ այն, ինչ գրանցված է բառարաններում այդ բառերի դիմաց: Սակայն մատենագիրներից ոչ ոք իր աղբյուրը նշելիս չի բերում որևէ այնպիսի տեղեկություն, որը մենք այսօր գտնեինք Շիրակացու մեզ հասած երկերում: Այս փաստը միանալով Հորդանանն անցնելու և Եգիպտոսից դուրս գալու մասին Շիրակացու և Ասողիկի հաղորդած տեղեկություններին, ցույց է տալիս, որ մատենագիրների օգտագործած աղբյուրները մեզ չեն հասել: Մեր սույն հոդվածի զլիսավոր նպատակը հենց այդ փաստի բացահայտումն էր. մի փաստ, որով հերքվում են Թղթյա ձեռագրում բնօրինակված ժամանակագրությունը Շիրակացու Զատիկի ճառում հիշատակվող «ժամանակական կանոնի» (Քրոնիկոնի) հետ նույնացնելու նպատակով գիտական շրջանառության մեջ դրված փաստարկներն ու տեսակետները:

* * *

Նույնացման հերքումը, սակայն, դեռևս չի նշանակում, թե ժամանակագրության հեղինակը Շիրակացին չէ: Տեսականորեն հնարավոր է, որ հայ մեծ հանրագետը գրած լիներ և՛ Զատիկի ճառում հիշատակվող «ժամանակական կանոնը», և՛ Թղթյա ձեռագրում պահպանված ժամանակագրությունը: Արդեն ասվեց, որ մասնագետների մեծ մասն այդ ժամանակագրությունը վերագրել է Շիրակացուն: Բացառություն են կազմում Գ. Խալաթյանցը, Բ. Սարգիսյանը, Յ. Մարկվարտը և Ն. Բարթիկյանը: Սրանցից առաջին երեքը ժամանակագրության երկրորդ կեսը՝ «Կայսերաց գիրքը» անչառել են նախորդ հատվածներից և վերագրել Թղթյա ձեռագրի պատվիրատու Դավիթ քահանային (Գ. Խալաթյանց)⁶⁹, Փիլոսոֆներին կամ «մի այլ միաբանաց ասորու մը» (Բ. Սարգիսյան)⁷⁰, Շիրակացուն (Յ. Մարկվարտ)⁷¹, իսկ Ն. Բարթիկյանն ամբողջ ժամանակագրության հեղինակ է համարել Փիլոն Տիրակացուն⁷²:

Այս վերջին ենթադրության համար հիմք է ծառայել № 5254 ձեռագրում համառոտագրված միևնույն ժամանակագրության «Խօսք Փիլոնի» խորագիրը: Ն. Ակինյանը, Լ. Խաչիկյանը, Ա. Աբրահամյանը, Ն. Անասյանը և ուրիշներ № 5254 ձեռագիրն ուսումնասիրելիս Փիլոնի անունը նկատելով ու նշելով հանդերձ կարևորություն չեն տվել դրան և շարունակել են ժամանակագրությունը վերագրել Շիրակացուն: Իսկ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրաց ցուցակի հեղինակները Փիլոնի անունն առհասարակ չեն նշել և ժամանակագրությունը գրանցել են որպես «Ան. Շիրակացու ժամանակական կանոնը»⁷³: Նրանք ձեռագիրն ուսումնասիրելիս տեսել են, որ «Խալաթ Փիլոնի» ծանոթագրությունը ժամանակագրության վերնագիրը չէ, այլ այնպիսի մի ծանոթագրություն, ինչպիսին է «Մովսէսի Խորենացույ և Անդրէասի» ծանո-

⁶⁹ Гр. Халагянц, Армянский эпос в Истории Моисея Хоренского, ч. 1, М., 1903, с. 54.

⁷⁰ «Տուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի վենետիկ», հ. Բ, էջ 444:

⁷¹ Hippolytus Werke, էջ 413—435.

⁷² Հրաչ Բարթիկյան, Անանիա Շիրակացուն վերագրվող «ժամանակագրության» և նրա բանաբաղի հարցի շուրջը, «Բանբեր Մատենադարանի», № 8, 1967, էջ 72—76:

⁷³ «Տուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան մատենադարանի», հ. Բ, կազմեցին Ծ. Եզանյան, Ա. Զելիստյան, Փ. Անթապյան: Խմբագրությունը Լ. Խաչիկյանի, Ա. Մնացականյանի, Երևան, 1970, էջ 68:

Քաղաքացիները Քղթյա ձեռագրի ժամանակագրության սկզբում⁷⁴: Դրանք վերաբերում են ժամանակագրության միայն մեկական փոքրիկ հատվածների և իրենց նման «վերնագրեր» ունեն ժամանակագրության նաև այլ հատվածներում: № 5254 ձեռագրում, օրինակ, կա «Խօսք Փիլոնի» նման մեկ այլ վերնագիր. «Արիղենոս պատմագրի» (էջ 196 ա):

Քղթյա ձեռագրի համար նախագաղափար հանդիսացած օրինակում ժամանակագրության սկիզբը պակաս է եղել, և ժողովածուն կազմողն ինքն է լրացրել պակասը⁷⁵, քաղելով Խորենացուց և Անդրեասից: Այս դեպքում հայոց Պատմահոր և Անդրեասի անունները պարունակող ծանոթագրության ներկայությունը Քղթյա ձեռագրում հասկանալի է: Այլ է վիճակը № 5254 ձեռագրում: Այստեղ Փիլոնի անվան փոխարեն պետք է լիներ Հիպոդիտոսի անունը, որովհետև ժամանակագրությունն սկսվում է Հիպոդիտոսի երկի թարգմանությամբ:

Եթե ժամանակագրությունը վերաբերի ավելի հին ժամանակների՝ կարելի կլիներ առանց վարանելու ընդունել, որ «Խօսք Փիլոնի» վերնագրում ակնարկված է հանրահայտ Փիլոն Երրայեցին, մանավանդ, որ № 5254 ձեռագրում, ժամանակագրության մեկ այլ հատվածում Փիլոնը Հովսեպոս Փլավիոս պատմիչի հետ միասին հիշատակվում է հենց որպես ժամանակագիր. «Յովսէպոս պատմագիր, Փիլոն ժամանակագիր» (էջ 200 ա)⁷⁶: Ձեռագրի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ վերնագրում, համեմատելիս, ակնարկված է Փիլոն Երրայեցին: Քիչ առաջ ասվեց, որ ժամանակագրության մեջ կա «Խօսք Փիլոնի» վերնագրի նման ևս մեկ վերնագիր. «Արիղենոս պատմագրի»: Այս վերնագիրը դեռը պարզապես սխալվել է, կարծելով, թե ժամանակագրության տվյալ հատվածը Արիղենոսինն է: Ծիշտ այդպես էլ նա սխալվել է «Խօսք Փիլոնի» վերնագիրը դնելիս: Այդ վերնագրի տակ գետեղված հատվածը, ինչպես ասվեց, Հիպոդիտոսի ժամանակագրության հատվածն է:

Իսկ որ «Խօսք Փիլոնի» խորագիրը վերաբերում է Փիլոն Երրայեցուն, այդ մասին է վկայում նաև այն, որ Փիլոնի անունը նշված է առանց մականվան: Այդպես են նշվում միայն նշանավոր մատենագիրները, և Փիլոնը մեր ձեռագրերում ամենուրեք նշվում է այդպես: Ինչ վերաբերում է Տիրակացուն, ապա նա մականվամբ պետք է հանդես գար ամենից առաջ հենց № 5254 ձեռագրում, տարբերվելու համար Հովսեպոսի հետ նշված հանրահայտ Փիլոնից:

Փիլոն Տիրակացու մասին հայտնող առաջին պատմիչը Ասողիկն է, որը Տիրակացուն հիշատակում է այնպիսի մի տեղում, որն ինքնըստինքյան պահանջում է հիշատակել ժամանակագրական աշխատությունների հեղինակների: Այսքան հարմար մի տեղում, սակայն, նա նշում է Անանիա Շիրակացու «Քրոնիկոնը», իսկ Տիրակացու անվամբ դրանցում է միայն այն, ինչ իսկապես նրա գրչին է պատկանում՝ Սոկրատ Սրուստիկոսի Եկեղեցական պատմության թարգմանությունը. «Իսկ Անաստաս խորհեալ Հայաստանեայցս կարգել տամար անշարժ բատ այլոց ազգաց՝ և հրամայէ Անանիայի Շիրակացույ կար-

⁷⁴ Ձեռագրացուցակի հրատարակությունից հետո մեր օրերում լույս տեսնող որոշ աշխատություններում ժամանակագրությունը դեռևս վերագրվում է Փիլոնին:

⁷⁵ Շիրակացու մատենագրությունը, էջ 357:

⁷⁶ Hippolytus Werke, էջ 396-397:

⁷⁷ Հովանենի Սարկավազը (էջ 241) նույնպես Փիլոնին հիշում է Հովսեպոսի հետ միասին. «Փիլոն և Յովսէպոս և Մովսէս»:

գել զՔննիկոնն հրաշագան... ի սորա տուրս էր և Փիլոն Տիրակացին, որ զՍոկրատայ Պատմութիւնն թարգմանեաց ի հայ լեզու»⁷⁷: Պարզ երևում է, որ Տիրակացին միայն Սոկրատի թարգմանիչն է, և՛ ուրիշ ոչինչ:

Միևնույն տեղեկությունը գտնում ենք նաև վանական վարդապետի «Հարցմունք և պատասխանիք» աշխատությունում: Այստեղ հարց է տրվում. «Ո՞վ է Փոքր Սոկրատն»⁷⁸: Պատասխանվում է. «Փիլոն ասեն Շիրակացի»⁷⁹: Սույն տեղեկությունն ուշագրավ է ոչ միայն նրանով, որ Տիրակացին դարձյալ հանդես է գալիս միայն որպես Սոկրատի թարգմանիչ, այլև՝ առավել ևս նրանով, որ Փիլոնը կոչված է ոչ թե Տիրակացի, այլ Շիրակացի: Ըստ որում՝ վանական վարդապետը բացահայտ հայտնում է, որ Տիրակացին՝ էր «ի Շիրակ գեղջէ»⁸⁰ և հենց դրա համար էլ կոչվում էր Շիրակացի. «վասն այն Շիրակացի են ասել»⁸¹: Նույնիսկ այն ձեռագրերում, որոնցում Փիլոնը կոչված է ոչ թե Շիրակացի, այլ Տիրակացի, դարձյալ ծննդավայրը ցույց է տրվում Շիրակը և կրկին հայտնվում է, որ Շիրակում ծնված լինելու պատճառով է նա կոչված Շիրակացի. «Հարցումն. Ով է Փոքր Սոկրատն: Պատասխանի. Փիլոն ասեն Տրակացի, ի Շիրակ գեղջէ. վասն այն Շիրակացի են յասել»⁸²: Սույն հիշատակությունը պարունակող ձեռագիրն ընդօրինակված է XIII դարում, այսինքն ժամանակակից է վանական վարդապետին⁸³:

Վանականի հաղորդումը կարևորություն է ստանում նաև այն պատճառով, որ Հաչաստանում Տիրակ անունով վայր հայտնի չէ: Գ. Տեր-Մկրտչյանը մեր Մատենադարանի մի ձեռագրում նշել է այդպիսի մի անուն՝ Շիրակում⁸⁴: Բայց մեզ հայտնի երկու այլ ձեռագրերում (№ 7050, էջ 174 և № 10236, էջ 131ա) Գ. Տեր-Մկրտչյանի նշած Տիրակը հանդիպում է «տիրակաց» և «տիրակացն» ձևերով. «զբաղարն զԱնի հանդերձ նահանգաւ, որք Շիրակա և տիրակաց և պահակաց (կամ «պաղակայ», «պաղականացն»)»: Արիստակես Լաւարիվերցին, Մատթեոս Ուռհայեցին, Հովհաննես Կոզեռնը, Վարդան Արևելցին նույնպես խոսում են միևնույն նյութի մասին, բայց Տիրակ անուն չեն նշում: Այս պայմաններում՝ վանականի հաղորդումը Փիլոնի շիրակացի լինելու և Շիրակացի կոչվելու մասին կարող է նույնիսկ հուշել այն միտքը, որ Ասողիկի գրքում գործ ունենք երկաթագիր Ծ-ի և Տ-ի շփոթի հետևանքով առաջացած Տիրակացի անվան հետ, որի փոխարեն սկզբում եղել է Շիրակացի: Ասողիկի գրելաձևից էլ այնպես է երևում, որ նա Փիլոնին հիշել է միայն այն բանից հետո, երբ խոսել է մեկ ուրիշ շիրակացու՝ Անանիայի մասին: Այս Անանիային հիշատակելուց հետո նա մտաբերել է Շիրակ գյուղում ծնված

77 Ասողիկ, էջ 99:

78 Մատենադարան, ձեռ. № 1254, էջ 48բ:

79 Անդ:

80 Անդ:

81 Անդ:

82 Անդ, ձեռ. № 5611, էջ 96ա—96բ:

83 Անկախ ձեռագրերի ընդօրինակման ժամանակից՝ վանականի երկր պարունակող մեզ հայտնի բոլոր ձեռագրերում (տե՛ս նաև «Հանդես ամսօրյա», 1947, էջ 440) Տիրակացու մասին հայտնվում է «ի Շիրակ գեղջէ, վասն այն Շիրակացի են ասել»:

84 Տե՛ս «Սոկրատայ Աբրահամիկոսի Եկեղեցական պատմութիւն». Թարգմանեաց Փիլոն Տիրակացի, Վաղարշապատ, 1897, Առաջարան, էջ 82:

(«ի Շիրակի գեղջէ») Փիլոնին և գրել. «ի սորա աուրս էր և Փիլոն Շիրակացին»⁸⁵:

Վերադառնանք N° 5254 ձեռագրին: 1280 թ. արտագրութիւնն հանդիսացող այս ժողովածուում պահպանված ժամանակագրութիւնը բանաբաղված է ոչ թե անմիջապէս Թղթյա ձեռագրից, այլ մեկ այլ գաղափար օրինակից: Դա երևում է երկու ձեռագրերի ընթերցվածքների տարբերութիւններից: Թղթյա ձեռագրի ժամանակագրութիւնն անհամեմատ ավելի արժեքավոր է իր լիակատար բնագրով, իսկ N° 5254 ձեռագրում գտնվում է խիստ համառոտագրված մի ժամանակագրութիւն, որի հեղինակը բնագիրը կրճատելուց բացի երբեմն իր բառերով է վերապատմում նյութը: Նրան ավելի շատ հետաքրքրել են Հիպոդիտոսի ժամանակագրութիւնի աստվածաշնչային անձնանունները, և նա կրճատել է աշխարհագրական տեղանունների մեծ մասը: Հիպոդիտոսի հատվածի սահմաններից դուրս նույնպէս նա կատարել է կրճատումներ և հավելումներ, որոնցում գտնում ենք բաղվածքներ նույնիսկ XIII դարի մատենագիր Վանական վարդապետից⁸⁶: Նրա օգտագործած օրինակը երբեմն ունեցել է Թղթյա ձեռագրում պակասող տեղեկութիւններ Քսերքսեսի, Դարեհի, Պտղոմեոս Հայրասերի, Արկադեոսի և այլ պատմական անձանց և անցքերի մասին: Սրանք պետք է օգտագործել Թղթյա ձեռագրի ժամանակագրութիւնի ասպագա հրատարակութիւնի ժամանակ⁸⁷:

Տարբերութիւններով հանդերձ N° 5254 ձեռագրի համառոտ ժամանակագրութիւնն ունի հիմնականում նույն կառուցվածքը (չհաշված «Արիդենոսի պատմագրի» և «Թագաւորք Արշակունիք թագաւորեցին Հայաստան աշխարհի» վերնագրերը կրող հատվածները, որոնք Թղթյա ձեռագրում բացակայում են), ինչ որ Թղթյա ձեռագրերը: Սրանից երևում է, որ նման կառուցվածք ունեցող մի ժամանակագրական ժողովածու գոյութիւն է ունեցել արդէն մինչև Թղթյա ձեռագիրը (981 թ.): Այդ ժողովածուի մի օրինակ գտնվել է Թղթյա ձեռագրի, մեկ այլ օրինակ՝ N° 5254 ձեռագրի գրիչների ձեռքին: Ն. Ակիւնյանը կարծիք է հայտնել, թե ժողովածուն կազմողը Թղթյա ձեռագրի պատվիրատու և ստացող Գավիթ բահանան է⁸⁸, սակայն արդէն ասվեց, որ նախքան Գավիթ բահանան գոյութիւն է ունեցել նման մի ժողովածու, որը N° 5254 ձեռագրի գրիչը համառոտագրել է, կրճատելով բազմաթիվ հատվածներ, որոնց շար-

⁸⁵ Հ. Աճառյանը, նկատի ունենալով Ալիշանին և Զարրհանայանին, գրում է. «Ոմանք անհանում են Շիրակացի, որ սխալ է» (Հայոց անձնանունների բառարան, հ. 5, Երևան, 1962, էջ 206): Մենք մեծանուն հայագետին չենք առարկում, այլ պարզապէս ուշագրութիւն ենք հրապարակում N° 1254 ձեռագրի վրա, որում Տիրակացու փոխարեն գրված է Շիրակացի Այս նորահայտ փաստը վերը մեր ներկայացրած միջավայրում ձեռք է բերում մասնագետներին ներկայանալու և բննարկման ենթարկվելու իրավունքը:

⁸⁶ «Իսկ որ ի սոցանէ զգոյրութիւն և գրով վարին, առաջին երբայեցիք: Իսկ Վիրք և Աղուանք ոչ կատարեալ գիր ունին, այլ խզեալ ի Հայոցն (խազել = գծել են ըստ հայոց այբուբենի — Գ. Ա.) սոսիւ: Ասորին և Իսմայիլացին յերբայեցոյն առին» (էջ 192ա): Այլ ձեռագրերում «խզեալի» փոխարեն՝ «խլեալ», «առեալ»:

⁸⁷ Զեռագիրը կարող է օգտագործվել նաև նվազիտս Կեսարացու «Քրոնիկոնում» մի երկու բառ լրացնելու կամ ծանոթագրելու համար: Նկատի ունենք «Արիդենոսի պատմագրի» խորագրի տակ իրականում նվազիտսից (հ. 1, էջ 40 և 44) բաղված տեղեկութիւնները:

⁸⁸ Ն. Ակիւնյան, Գավիթ բահանայի խմբագրած ժամանակագրութիւնը, «Հանդես ամսօրյա», 1957, էջ 183:

քում են նաև Քղթյա ձեռագրում «Եւսերի ժամանակագրի», «Եպիփանոս» և «Պարսից թագաւորքն» խորագրերի տակ գետնադրած հատվածները⁸⁹:

Յ. Մարկվարտն արդեն հայտնել է⁹⁰, որ Գավիթ քահանայի ներմուծում պետք է համարել միայն «Մովսէսի Խորենացույ և Անդրեասի» խորագրի տակ գետնադրած հատվածը Քղթյա ձեռագրում⁹¹: Իսկ դրան հաջորդող մասը մինչև «Թագաւորք Պարսիկք Սասանականք» ցանկը նա դիտում է որպես Գավիթ քահանայի կողմից Անդրեասին վերագրված մաս⁹² և հիշեցնում է, որ Բ. Մարգիսյանը ժամանակին նկատել է այդ մասի ազգակցութունը «Մովսէսի և Յրիքի հրատարակած Liber generationis 1-ինի հետ»⁹³: Ն. Ակինյանը նույնպես գրում է. «Անգրէաս հոս կնույնանա Հիպոդիտոսի կամ «Ազգաց գրքի» Liber generationis (hominum) հեղինակին հետ»⁹⁴: Ա. Մաթևոսյանը Քղթյա ձեռագրի ամբողջ ժամանակագրութունը (բացառած «Կայսերաց գիրքը») համարում է «Անդրեասի ժամանակագրութուն»⁹⁵:

Ն. Ակինյանին հայտնի են եղել Հիպոդիտոսի ժամանակագրութւյան հետ առնչվող երեք սկզբնաղբյուր՝ Քղթյա ձեռագիրը, № 5254 ձեռագիրը և Զմմառի մատենադարանի № 204 ձեռագիրը, որը Ակինյանի օրոք գրանցված էր 83-րդ համարի տակ: Դեռևս 1953-ին նա գրել է. «Հայերեն ձեռագիր մը (նկատի ունի № 5254-ը—Գ. Ա.), որ ասկէ (Հիպոդիտոսի ժամանակագրութւյունից—Գ. Ա.) քաղվածքներ կսլարունակե, խորագիր կկրե. «Բանք Փիլոնի» («Խօսք Փիլոնի»— Գ. Ա.)... Հայերեն թարգմանութւյունը կատարված է Ե դարու առաջին կեսին⁹⁶, հույն բնագրեն: Պահված է մեզի միայն Ա մասը Զմմառի վանքին Բ. 83 ձեռագրին մեջ, օրինակած ժԲ դարուն... Հիպոդիտոսի գործին նոր հրատարակութւյուն մը պատրաստած եմ, հիմ առած Զմմառի Բ. 83 և էջմիածնի Բ. 2679»⁹⁷:

Զմմառի ձեռագրից որոշ հատվածներ արդեն տպագրված են⁹⁸: Ձեռագիրը գրանցված է որպես Շիրակացու Աշխարհացույց, բայց իրականում սկսվում է Հիպոդիտոսի ժամանակագրութւյամբ, որի միայն սկիզբն է պահպանվել: Ձեռագրից թղթեր ընկած լինելու պատճառով ժամանակագրութւյունը խառնվել

89 Տե՛ս Շիրակացու մատենագրութւյունը, էջ 376—378:

90 Hippolytus-Werke, էջ 396—397:

91 Ձեռ. № 2679, էջ 29ա-ր: Հմմտ. Շիրակացու մատենագրութւյունը, էջ 357—358: Մեր կարծիքով, ներմուծում պետք է համարել մինչև 359-րդ էջի 17-րդ տողը ներառյալ: Մարկվարտը ցույց է տվել Անդրեասի «բանաձևը» («ճկաց ամս... մինչև...») այդ և նախորդ էջերում:

92 Hippolytus Werke, էջ 397:

93 Անդ:

94 Ն. Ակինյան, Գավիթ քահանայի խմբագրած ժամանակագրութւյունը, «Հ. ամս.», 1957, էջ 184:

95 ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1979, № 9, էջ 79:

96 Ն. Ակինյանի ուշադրութւյունից վրիպել է Ա. Բաուերի և Յ. Մարկվարտի բացահայտած այն իրողութւյունը, որ հայերեն թարգմանութւյունը կատարված է VI դարում ստեղծված խմբագրութւյունից (հետևաբար՝ չէր կարող «Ե դարու առաջին կեսին» թարգմանված լինել):

97 «Հանդես ամսօրյա», 1953, էջ 163:

Ակինյանի անախագործների մեջ հիշատակվում է «Ժամանակագրութիւնն Հիպոդիտոսի և դարու թարգմանութեամբ. ժԲ դարու ձեռագրէ մը» («Հանդես ամսօրյա», 1954, էջ 414): Ինչպես երևում է, սույն աշխատութւյունը հրատարակութւյան պատրաստ չի եղել:

98 «Ցուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին», կազմեց Մեարոպ Վարդապետ Քելեշեան, Վիեննա, 1964, էջ 487—488:

է Աշխարհացույցի (որի սկիզբը մնացել է կորած թղթի վրա) հետ, այսպես. «Յարեթ գկողմն արևմտից և զհիւսիսիոյ⁹⁹ յոլով յերկիրն ի հիւսիսային կողմանն ՇԹ Ե—երեակֆ Եւ անդեն զԹուլիմ կղզի»¹⁰⁰: Մեր ընդգծածով սկսվում է Աշխարհացույցը, իսկ նրան նախորդող ընդգծվածը պատկանում է Շիրակացուն վերագրված ժամանակագրությանը:

Զմմառի ձեռագրում գտնում ենք Հիպոդիտոսի ժամանակագրության այն սկիզբը, որը Թղթյա ձեռագրում բացակայում է և փոխարինված է Խորենացուց և Անդրեասից բաղված հատվածով: Այս ձեռագրի միջոցով միաժամանակ պարզվում է, որ Հիպոդիտոսի ժամանակագրությունը Հայաստանում թարգմանված է եղել լրիվ, սկսած հեղինակի խոստաբանությունից: Սակայն համեմատությունը հունարեն բնագրի հետ ցույց է տալիս, որ Զմմառի օրինակն աղճատված է, նրանում կան հունարեն բնագրից շեղվող տեղեր:

Բայց որ նախնական թարգմանությունում այդ շեղումները չեն եղել՝ երևում է, օրինակ, մեր Մատենադարանի № 5443 ձեռագրից¹⁰¹: Այստեղ կարդում ենք. «Եւ յետ ժամի ծնրնդեան Սեմայ եկն ջրհեղեղն ի ԶԸ-երորդի կենաց Նոյի. և առնու յԱղամայ մինչ ջրհեղեղն ազգ ժամֆ ՍՄԽԹ... առնի ի ջրհեղեղէն ազգ Եւ ամֆ ՇԻԵ և յԱղամայ ազգ ՓԵ, ամֆ ՍՉԿԵ: Բաթինք Երկրի յԳ որդւոցն Նոյի յեր ջրհեղեղին»¹⁰² և այլն: Մեր ընդգծած տողերին համապատասխանող տողեր հունարեն բնագրում կան, սակայն Զմմառի ձեռագիրը չունի: Կնշանակի № 5443 ձեռագրի գրիչն օգտվել է ավելի ընտիր մի օրինակից: Այսպիսի մի օրինակից է ժամանակին օգտված եղել նաև Թղթյա ձեռագրում բաղվածաբար օգտագործված Անդրեասը, որը նույնպես մեր ընդգծած տեղերն ունի¹⁰³: Մովսես Կաղանկատվացի¹⁰⁴ և № 5254 ձեռագրի գրիչը¹⁰⁵ նույնպես ծանոթ են եղել Զմմառի ձեռագրից ավելի լավ մի ընդօրինակություն պարունակած ձեռագրի, որից բաղել են «Եւ լինին յԱղամայ մինչև ցջրհեղեղն ամֆ ՍՄԽԹ և ազգք ժ» տեղեկությունը:

Չորս տարրեր օրինակների¹⁰⁶ համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բոլորում օգտագործված է Հիպոդիտոսի ժամանակագրության միևնույն թարգմանությունը, որը ձեռագրերում կրել է փոփոխություններ: Սակայն Ա. Մաթևոսյանը ենթադրում է, որ Թղթյա ձեռագրում պահպանված Հիպոդիտոսյան ժամանակագրության հեղինակն Անդրեասն է («Շիրակացուն վերագրվող Պատմության հեղինակ Անդրեասը հույն է») ¹⁰⁷: Այս Անդրեասի երկում Հիպոդիտոսի ժամանակագրությանը համապատասխանող բնագիրը, Մաթևոսյանի կարծիքով, տարբերվում է Զմմառի № 204 ձեռագրում առկա

99 Զմմառ. Շիրակացու մատենագրությունը, էջ 365, տ. 3:

100 Զմմառ. անդ, էջ 337, տ. 4—5:

101 Սույն ձեռագրում «նւանրի ի ժամանական կանոնացն» խորագրի տակ Ա. Մաթևոսյանը հայանարեղել է Հիպոդիտոսի թարգմանության մի նոր ընդօրինակություն (տե՛ս 2002 ԳԱ «Լրաբեր», 1979, էջ 79):

102 ԶԵՈ. № 5443, էջ 395ա: Զմմառ. Զմմառի ձեռագրաց ցուցակ, էջ 487:

103 Զմմառ. Շիրակացու մատենագրությունը, էջ 359:

104 Մովսես Կաղանկատվացի, էջ 3:

105 ԶԵՈ. № 5254, էջ 190բ:

106 Թղթյա ձեռագիր, Զմմառի ձեռագիր № 204, Մաշտոցի անվ. Մատենադարանի № 5254 և 5443 ձեռագրերը:

107 2002 ԳԱ «Լրաբեր», 1979, № 9, էջ 79:

Հիպոդիտոսից, որի Թարգմանիչն Անանիա Շիրակացին է: Ըստ որում՝ Շիրակացին, ըստ Մաթևոսյանի, Հիպոդիտոսի ժամանակագրությունը Թարգմանել է այնքան, որքան անհրաժեշտ է եղել «Քննիկոնի տարբեր բաժիններին»¹⁰⁸:

Մեր կատարած համեմատությունը, սակայն, ինչպես ասվեց, ցույց է տալիս, որ միջնադարյան հայ մատենագրության մեջ գոյություն է ունեցել Հիպոդիտոսի երկի միայն մեկ Թարգմանություն, որից և սերում են բոլոր շորս օրինակները (նրանց թվում նաև՝ Զմմատի № 204 ձևագիրը): Այդ Թարգմանության հեղինակը ամենայն հավանականությամբ Անանիա Շիրակացին է, որը Հիպոդիտոսին Թարգմանել է լրիվ (և ոչ թե մասնակի՝ «Քննիկոնին» հարմարեցնելու համար): Ինչ վերաբերում է շորս օրինակներում հանդիպող տարբերություններին, ապա այդ տեսակետից ուշագրավ է № 5443 ձևագրում պահպանված մի հինգերորդ օրինակ: Այստեղ միմյանցից ընդամենը տաս թերթ հեռավորության վրա ընդօրինակված են Թղթյա ձևագրի ժամանակագրությունում հիշատակվող «գետք մեծամեծք և անուանիք են քառասուն» ցանկերը¹⁰⁹: Այս երկու ցանկերի համեմատությունը նույնպես բացահայտում է զանազան տարբերություններ, բայց կասկած չի կարող լինել այն մասին, որ երկրորդ ցանկը ծագում է իրենից տաս էջ առաջ ընդօրինակված՝ Հիպոդիտոսի ժամանակագրությունից:

Այժմ համեմատենք Թղթյա ձևագրից և Զմմատի № 204 ձևագրից մեկական հատված, ցույց տալու համար, որ երկուսն էլ պատկանում են Հիպոդիտոսի միակ Թարգմանությանը.

Թղթյա ձևագիր (981 թ.)

Որդիք Յարեթի, երրորդի որդւոյն
նոյի՝ Գոմեր, և ի նմանէ
Գամիրք... Ընդ ամենայն՝ ազգք
հօգևտասան: Եւ ի սոցանէ ելին
մեկնեցան կղզիք հեթանոսաց, որ են
Կիպրացիք՝ ի Կիտիացւոց, որդիք
Յարեթի: Բայց դարձեալ գտանեմք
և յայնոցիկ, որ են ի կողմանս
հիւսիսոյ, որ ազգակից են Կիտիաց-
ւոցն: Եւ ազգք են, որ են
ի Հեղաս աշխարհի՝ յայնցանէն,
որք յիտոյն փոխեցան անդր...
Բայց ուսանիմք զճշմարտու-
թիւն սոցա յԱրիւնաց
և ի Մարգարէից...¹¹⁰

Զմմատի ձևագիր (1178 թ.)

Որդիք Յաւեթի երրորդ որդւոյն
նոյի՝ Գոմեր և ի նմանէ
Գամիրք... Ընդ ամենայն՝ ազգ
ժն: Եւ ի սոցանէ ելին և
մեկնեցան կղզիք հեթանոսաց, որ են
Կիպրացիք՝ ի Կիտիացւոց, որդիք
Յարեթի: Բայց դարձեալ գտանեմք
յայնոցիկ, որ են ի կողմանս
հիւսիսոյ, որ են ազգակիցք Կիտիաց-
ւոց: Եւ ազգ, որ են
ի Հեղաս աշխարհի՝ յայնցանէ են,
որք յիտոյն փոխեցան անդր...
Բայց ցուցանեմք ընդ ճշմարտու-
թիւն նոցա յԱրիւնաց
և ի Մարգարէից¹¹¹:

Այսպիսի նույնությունները համատարած են: Ինչ վերաբերում է տարբերություններին, դրանք նույն բնույթի են, ինչ որ Աշխարհացույցի ձևագրերում հանդիպող տարբերությունները, որոնք բոլորովին էլ վկա չեն այն բանի, թե գոյություն են ունեցել Աշխարհացույցի տարբեր Թարգմանություն-

¹⁰⁸ Անդ, էջ 180:

¹⁰⁹ Զմմատ. Շիրակացու մատենագրությունը, էջ 364, № 5443, էջ 398բ և 408ա:

¹¹⁰ Անդ, էջ 359—360, ձ. № 2679, էջ 31ա:

¹¹¹ «Յուցակ ձևագրաց Զմմատի վանքին», էջ 437, ձ. № 204, էջ 7ա-բ:

ներս Զմմառի ձեռագրում գտնվող Աշխարհացույցի համեմատությունը Շիրակացու մատենագրությունում (էջ 336—354) տպագրվածի հետ նույնպես բացահայտում է էական տարբերություններ:

Չորս ընդօրինակությունների համեմատությունը միաժամանակ ակրնհայտ է դարձնում այն իրողությունը, որ նրանց բոլորի հիմքում ընկած հեղինակային օրինակը խորագիր չի ունեցել և որևէ հեղինակի անունը չի կրել: Արտագրողներից յուրաքանչյուրը հետագայում ավելացրել է իր ենթադրած անունը: Զմմառի № 204 ձեռագիրը մինչև օրս էլ վերնագիր չունի և դա լավագույն ապացույցն է հեղինակային օրինակում բացակայած անվան: Այս ձեռագրում, ի տարբերություն մյուս բոլորի, սահայանվել է Հիպոդիտոսի առաջաբանը, որով ապացուցվում է, որ ժամանակագրությունն իսկապես պատկանում է Հիպոդիտոսին և ոչ թե Փիլոնին, Անդրեասին կամ ուրիշների: Հունարենի հետ համեմատությունը բացահայտում է որոշ կրճատումներ, սակայն դրանք հեղինակի անվանը վերաբերել չեն կարող, այսինքն՝ հնարավոր չէ, որ հաջ թարգմանիչը կրճատած լիներ նաև հեղինակի անունը: Այն հանգամանքը, որ Զմմառի ձեռագրում, ինչպես նաև Թղթյա ձեռագրում ժամանակագրությունն ընդօրինակված է Շիրակացու երկերի շարքում, հիմք է տալիս ենթադրելու, որ այդ երկերն սկզբնապես գտնված են եղել մի ժողովածուում, որում Շիրակացու անունը նշված է եղել միայն երկերից մեկի վրա: Մյուս երկերն անանուն են եղել: Այդ վիճակում էլ ընդօրինակել են հետագա գրիչները: № 5443 ձեռագրի գաղափար օրինակում ժամանակագրությունը շփոթվել է Եվսեբիոս Կեսարացու երկի հետ և վերնագրում ավելացվել է Եվսեբիոսի անունը, № 5254 ձեռագրի հեղինակն ավելացրել է Փիլոն Երրայեցու անունը, իսկ Թղթյա ձեռագրում ներմուծվել են Խորենացու և Անդրեասի հատվածները (Անդրեասի անունը նշված լինելով Խորենացուց հետո, ցույց է տալիս, որ այդ ժամանակագիրն ապրել է ուշ դարերում)¹¹²: Բոլոր դեպքերում էլ ավելացված անունները վերաբերում են ոչ թե ամբողջ ժամանակագրությանը, այլ նրա միայն այն հատվածներին, որոնք գրիչների կարծիքով պատկանել են հիշյալ հեղինակներին:

№ 5254 ձեռագրի կապակցությամբ կարելի է նաև մտածել, որ Փիլոնի անունը սկզբնապես գրված է եղել գաղափար օրինակի լուսանցքում և հետո է թափանցել տեքստի մեջ: Այսօր էլ այդ ձեռագրի լուսանցքներում գտնում ենք տարբեր հեղինակների անուններ, ինչպես նաև տեքստի մեջ թափանցած լուսանցազրույթներ: Հենց ժամանակագրության վերջում (էջ 202 բ) ներմուծված է հետևյալ լուսանցազրույթները. «Քսիսուսթրոս Նոի ասեն և Զրուանդ Սեմա և Տիտանն Քամա և Յասպետոսթե Յարեթի» (Խորենացի): Իսկ ժամանակագրության սկզբում «Խաւսք Փիլոնի» բառերից առաջ ընդօրինակված է «Բարոյախոս» կոչվող առակների ժողովածուի մեղվին վերաբերող առակը: Քանի որ մեղվին նվիրված մի խոսք էլ ունի Փիլոնը, մյուս կողմից էլ՝ հայտնի է, որ «Բարոյախոսի» հեղինակ է համարվել ի շարս մի շարք այլ հեղինակների նաև Փիլոնը, կարելի է ենթադրել, որ «Խաւսք Փիլոնի» ծանոթագրությունն սկզբնապես լուսանցքում գրված է եղել մեղվի առակը նկատի ունենալով և ապա լուսանցքից տեքստի մեջ տեղափոխող գրիչը լուսանցազրույթյան իրա-

¹¹² Գրիգոր Տղան Անդրեասին նշում է Շիրակացուց հետո (տե՛ս վերը), որով նույնպես հուշում է այն միտքը, որ Անդրեասը ուշ ժամանակներում ապրած մատենագիր է:

կան տեղը շիմանալով՝ տեղափոխել է մեղվի առակի և նրան անմիջապես հաջորդող ժամանակագրության միջև, որի հետևանքով էլ այժմ Փիլոնի անունն ընկալվում է որպես ժամանակագրությանը վերաբերող անուն:

Ինչպես էլ ընթացած լինի գործողությունը՝ փաստն այն է, որ «Խօսք Փիլոնի» ծանոթագրությունը վերաբերում է հանրահայտ Փիլոն Եբրայեցուն, որը Հիպոդիտոսի ժամանակագրության հետ կապ չունի և սխալմամբ է հայտնվել այդ ժամանակագրությունն սկսող հատվածի դիմաց:

Հայտնի են «Բարոյախոսի» և Փիլոնի երկերի համատեղ ընդօրինակության դեպքեր: Այսպես, օրինակ, Ամրդոլու վանքի ձեռագրաց ցուցակում կարդում ենք այդպիսի երկու ձեռագրերի մասին. «Բ գիրք. Բովանդակ հարց և պատասխանիք Փիլոնի և այլոցն, և միոյն հետն «Բարեխօս»¹¹³: Թղթյա ձեռագրում (էջ 29ա) ժամանակագրությունից անմիջապես առաջ (տող 7—25) ընդօրինակված է Փիլոնից բաղված մի հատված, որի վրա, սակայն, գրված է «նորին Անանիայի»¹¹⁴: Այս կարգի ընդօրինակությունները նույնպես կարող էին նպաստել Փիլոն Եբրայեցու անվան հայտնվելուն ժամանակագրության սկզբում:

Г. В. АБГАРЯН

ХРОНИКА, ПРИПИСЫВАЕМАЯ АНАНИИ ШИРАКАЦИ

Резюме

Греческий текст «Хроники» Ипполита (Hippolytus, род прим. в 170 г., умер 253 г.) долгое время считался утерянным и был опубликован впервые в 1929 г. в Лейпциге (второе издание—Берлин, 1955 г.). До публикации оригинала в научной литературе пользовались латинским и армянским переводами.

Имя армянского переводчика в рукописях не сохранилось, однако по верному мнению большинства специалистов автором древнеармянского перевода является Анания Ширакаци, перу которого принадлежат также другие произведения аналогичного характера. Об одном из таких произведений свидетельствует сам Ширакаци. В Пасхальной речи он называет свое произведение «ժամանակական կանոն», что является дословным переводом греческого «*αχρονικός κανών*» и известно также как заглавие «Хроники» Евсевия Кесарийского.

В настоящей статье анализируются данные Пасхальной речи, выявляются новые свидетельства у других средневековых писателей, пользовавшихся трудом Ширакаци, и на основании первоисточников доказывається, что упомянутое в Пасхальной речи сочинение не дошло до нас. Выявлением этого факта одновременно опровергается мнение ученых, отождествляющих утерянный труд Ширакаци с анонимной компиляцией, сохранившейся в рук. № 2679 и изданной в 1904 г. в Венеции (второе издание—Ереван, 1944).

Анонимная компиляция состоит в основном из двух частей: «Хро-

¹¹³ Մատենադարան, ձեռ. № 737, էջ 230ր:

¹¹⁴ Տե՛ս «Յուցակ ձեռագրաց մատենադարանին ի վենետիկ», հ. Բ, էջ 279:

ники» Ипполита и «Истории греческих императоров». В рук. № 5254 Матенадарана им. Маштоца компиляция начинается примечанием «Слова Филона». На основании этого предполагалось, что автором компиляции является армянский переводчик Филон Тиракаши. Однако в представляемой вниманию читателей настоящей статье показывается, что в примечании имеется в виду знаменитый Филон Александрийский (Еврей), имя которого оказалось в компиляции случайно. Действительным автором первой части компиляции является, как уже известно, Ипполит, а имя автора второй части пока остается неизвестным.

G. V. ABGARIAN

LA CHRONIQUE ATTRIBUEE A ANANIA CHIRAKATSI

Résumé

Le texte grec de la „Chronique“ d’Hippolyte (Hippolytus, né vers 170, mort en 253) était longtemps considéré comme perdu et il n’a été publié pour la première fois qu’en 1929 à Leipzig (seconde édition: Berlin, 1955). Avant la publication de l’original, c’étaient les traductions latine et arménienne qui avaient cours dans la littérature scientifique.

Le nom du traducteur arménien n’est pas mentionné dans les manuscrits, cependant de l’avis digne de foi de la plupart des spécialistes, l’auteur de la traduction arménienne ancienne est Anania Chirakatsi, à la plume duquel appartiennent aussi d’autres oeuvres de caractère analogue. Chirakatsi lui-même mentionne l’existence de l’un de ces ouvrages. Dans son Discours pascal, il nomme son oeuvre «Ժամանակակից կանոնք», ce qui est la traduction littérale du grec „Χρονικός κανόν“, connu aussi comme le titre de la „Chronique“, d’Eusèbe de Césarée.

Le présent article analyse les données du Discours pascal, révèle de nouveaux témoignages pris aux autres écrivains médiévaux, ayant utilisé l’ouvrage de Chirakatsi, et, se basant sur les sources, démontre que l’oeuvre mentionnée dans le Discours pascal ne nous est pas parvenue. Cette démonstration réfute en même temps l’opinion des chercheurs qui identifient l’oeuvre perdue de Chirakatsi à la compilation anonyme conservée dans le Ms. № 2679 du Maténadaran et publiée en 1904 à Venise (seconde édition: Erévan, 1944).

La compilation anonyme se compose essentiellement de deux parties: la „Chronique“ d’Hippolyte et l’„Histoire des empereurs grecs“. Dans le Ms. № 5254 du Maténadaran Machtotz, la compilation commence par la note: „Paroles de Philon“. Ceci avait permis de supposer que l’auteur de la compilation était le traducteur arménien Philon Tirakatsi. Cependant, cet article montre que la note mentionne le célèbre Philon d’Alexandrie (le Juif), dont le nom s’est trouvé par hasard dans la compilation. Comme on le sait déjà, l’auteur authentique de la première partie est Hippolyte, tandis que le nom de l’auteur de la seconde partie reste encore inconnu.